

ՀԱՅԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ 1900-1950 ԱԿԱՆՆԵՐԻՆ (ԱԿՆԱՐԿՆԵՐ)

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

Հայութեան ներկայութիւնը Չինաստանի տարածքում սկիզբ է առել տակաւին մեր թուականութիւնից առաջ, իսկ չինահայ առաջին փոքր գաղութները հիմնուել են ԺԳ. դարի սկզբին, մոնղոլական առաջին արշաւանքից յետոյ, երբ գերեզմարուած հազարաւոր հայերի մի մասը բնակեցուել է Չինաստանի հիւսիսային շրջաններում¹: Չինաքնակ հայութեան երկրորդ հոսանքը կազմուած է եղել հնդկահայերից, որոնք ԺԷ.-ԺԸ. դարերում հաստատուել են Չինաստանի մեծ քաղաքներում (մեծ մասամբ՝ Հոնկոնգում եւ Շանհայում) եւ հիմնել առեւտրական տներ: Չինահայ գաղթականութեան երրորդ փուլը՝ հիմնականում արեւելահայ գանգուածներից, սկիզբ է առել ԺԹ. դարի վերջից եւ շարունակուել մինչեւ 1920ականները:

Ի. դարի առաջին կէսին Չինաստանում հաստատուած, Ցեղասպանութիւնից փրկուած կամ համայնավար յեղափոխութիւնից խոյս տուած այս հայերը դիմակայել են պատմութեան եւ ժամանակի այլ մարտահրաւէրներին եւս՝ 1927ին գեներալ Չան Կայ Չէկի իրագործած յեղաշրջումը, 1929ին՝ չին-մանչուրական հակամարտութիւնը, 1930ականների տնտեսական ճգնաժամը, 1932ին՝ Ճապոնիայի կողմից Մանչուրիայի (Չինաստանի հիւսիսային երկրամասի) բռնագաղութումը, Բ. Աշխարհամարտի տարիների ճապոնական բռնութիւնները եւ ապա՝ Մաօ Ցէ Թունկի գլխաւորած չինական Տրդ բանակի կողմից երկրի գրաւումը եւ համայնավարութեան հաստատումն ու դրան յաջորդած դժուարութիւնները:

Սոյն հաղորդումը վերաբերում է չինաքնակ հայութեանը Ի. դարի Ա. կէսին, որի պատմութիւնը համեմատաբար սակաւ է ուսումնասիրուած²: Մեր ուսումնասիրութեան համար աղբիւրներ են հանդիսացել Հայաստանի Ազգային Արխիւում պահուող հայերէն եւ ռուսերէն տասնեակ վաւերագրեր, ժամանակի մամուլը, յուշագրական գրականութիւն, ինչպէս նաեւ Չինաստանում ծնուած մի քանի հայերից ստացուած տեղեկութիւնները:

Ի. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԺԹ. դարի վերջին հայ գաղթականութեան նոր հոսք է եղել դէպի Չինաստան: Ռուսաստանի կողմից Արեւելահինական կամ հեռաւոր-արեւելեան երկաթուղու կառուցմամբ Միջին Ասիայից եւ Ռուսաստանի տարբեր շրջաններից մի շարք կարիքաւոր, տուն ու տեղից զրկուած հայեր տեղափոխուել են ռուսական ծայրագոյն արեւելք³ եւ Չինաստան, փոքր հայագաղութներ են հիմնուել Մուկդէն, Թանչուն, Դայրէն, Շանհայ եւ այլ քաղաքներում, որով եւ թարմ արիւն են ստացել արդէն հիմնուած հայկական համայնքները: Ռուս-ճապոնական պատերազմից յետոյ նրանց թիւը զգալիօրէն մեծացել է: 1905ին Խարբինի (Հարբին) հայերի տնտեսական վիճակն այնքան բարուօք է եղել, որ նրանք մինչեւ անգամ որոշակի գումարներ են

տրամադրել Կովկասում հայ-թաթարական բախումներից տուժած հայրենակիցներին⁴։ Մանչուրիայի հայերի բարգաւաճ վիճակն իմանալով՝ Թուրքիայից եւ Պարսկաստանից մի խումբ հայեր նոյնպէս գաղթել են Խարբին։ Անհրաժեշտութիւն է զգացուել ստեղծել մի հայկական կազմակերպութիւն՝ կարիքի մէջ գտնուող հայրենակիցներին օգնելու նպատակով։

1902ին Չինաստանում հաստատուած Կ. Հունտցեանը երկար թղթակցութիւն է ուղարկել Թիֆլիսահայ մամուլին՝ շինական արքունիքի՝ Պեկին հանդիսաւոր վերադարձի մասին⁵։ Երբեմն էլ Չինաստանում պաշտօնի բերումով յայտնուել են տարբեր երկրների հայեր։ Այսպէս, 1905ին, երբ Չինաստանի Փրանսիական մասում սկսուել է 450 կիլոմետրանոց երկաթգծի շինարարութիւնը, Փրանսիական կառավարութիւնն այդ շինարարութեան ղրխաւոր երկրաչափ է նշանակել Կարապետ Ժամազործեանին⁶։

Մինչեւ 1918, Խարբինի Նովի Գորոզ թաղամասում գործել է հայկական փայտաչէն աղօթատուն։ Հիմնադրման թուականը մեզ յայտնի չէ։ Ցաժմ նրա վերաբերեալ մեզ յայտնի առաջին տեղեկութիւնը վերաբերում է 1905ին։ Ինչպէս տեղեկացուել է Խարբինից Թիֆլիսի Մշակին ուղարկուած թղթակցութեան մէջ, 1905 Յունուարի 22ին Խարբինի «Պորտամուտ» հիւրանոցի ընդարձակ դահլիճում Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատուիրակ Ընձակ վարդապետը կատարել է ժամերգութիւն եւ հանդէս եկել քարոզով։ Ներկաները՝ մօտ 200 հայորդիներ, հիմնականում 10-12 տարիների թափառական չարքաշ կեանքից յետոյ առնչուել են հարազատ եկեղեցուն։ «Ո՞վ կարող էր երագել,- նշուած է թղթակցութեան մէջ,- որ այս դաժան, հեռու երկրում, վաղուց հայրենիքից անջատուած, ցիրուցան եղած մեր պանդուխտ հայ եղբայրները այսօր անակնկալ կերպով կարող կը լինեն միախմբուել մի արժանատի հոգեւորականի առաջ, որը դրդուելով հովուական խղճմտանքից, իր բարի ցանկութեամբ արհամարհել է ամէն մի խոչընդոտ, որպէս զի հոգեկան մխիթարութիւն բերէ օտարութեան մէջ տանջուող իր նեղսրտած հօտին»⁷։ Խարբինի ռուսական թերթի թղթակցիցը հայ վարդապետին համեմատել է Պիոս պապի հետ։ Մշակի թղթակցութեան մէջ նշուած է, որ ժամերգութիւնից յետոյ հայկական երգերի կատարումով ելլով է ունեցել հայ երգիչ Արշակ Կոստանեանը (1865-1920)⁸։

Նոյն՝ 1905ի Յունիսի 19ին Սիբիրի հայոց հովիւ Արիստակէս քահանայ Խեմչեանցը Խարբինում պատարագ է մատուցել Ջալալ բէգ Ալթունեանցի դահլիճում։ Ներկայ են եղել ինչպէս առաքելական, այնպէս էլ կաթողիկ հայեր։ Արիստակէս քահանան իր քարոզի մէջ խօսել է Բաքուում, Նախիջեւանում եւ այլ վայրերում այդ տարի տեղի ունեցած հայերի կոտորածների ու դրանց հետեւանքների մասին՝ կոչ անելով եղբայրական օգնութիւն հասցնել ջարդերից տուժածների ընտանիքներին։ Ապա Խաչատուր Թաթուլեանի պատրաստած մատաղի սեղանի վրայ հոգեհանգստի արարողութիւն է կատարել։ Խարբինի հայերը հայրենակիցներին օգնելու նպատակով հաւաքել են 2363 ռուբլի, որը ռուս-չինական դրամատան միջոցով փոխանցուել է Մշակի խմբագրութիւն։ Թղթակցութեան մէջ անուն առ անուն նշուել են այն հայերը, ովքեր մասնակցել են հանգանակութեանը⁹։

Հայերի նորանոր խմբեր Մայրագոյն Արեւելք են հասել Ա. Համաշխարհային Պատերազմի տարիներին: Նրանց մէջ եղել են բազմաթիւ գերիներ¹⁰, որոնց մի մասին յաջողուել է ազատուել եւ հաստատուել Չինաստանի տարբեր քաղաքներում: Այդ տարիներին Մայրագոյն Արեւելքի քաղաքներում դեգերել է ռուսական բանակի սպայ, ծնունդով ալեքսանդրապոլցի Լեւոն Սարումեանը: Նա 1917ին խորհրդում եղել է Անդրամուրեան Երկրամասի շտաբում, պաշտօնավարել ռուսական հիւպատոսի մօտ, այնուհետեւ՝ Պեկինի ռուսական դեսպանատանը: Սարումեանը եղել է Մայրագոյն Արեւելքի գրեթէ բոլոր քաղաքներում, չրջել ողջ Մոնղոլիայում եւ Հիւսիսային Չինաստանում, այցելել նաեւ Տիբեթ, Հնդկաստան եւ Ճապոնիա¹¹:

Չինաստանում գործող հայերին պատկանող մի քանի ընկերութիւններ մեծ նուիրատուութիւններ են կատարել յօգուտ 1915ի Մեծ Եղեռնից տուժած հայրենակիցների¹²:

ՉԻՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

1917ին ստեղծուել է Չինաստանի առաջին հայկական կազմակերպութիւնը՝ խորհրդի Հայոց Ազգային Միութիւնը, որի հիմնադիր-ղեկավարներն են եղել բժիշկ Ստեփաննոս Մղտեսեանը կամ Մղտեսեանը (Ստեփան Միզգիսով, 1867-1933), ճարտարագէտ, Արեւելա-չինական Երկաթուղու բազմամեայ աշխատող Միքայէլ Տէր-Յովակիմեանը (Միխայիլ Տէր-Օվակիմով, մահացել է 1947ին) եւ իրաւաբան Լեւոն Մելիք-Օհանջանեանը (Լեւ Մելիք-Օհանջանով): Չինաբնակ հայերը նրանց կատակով անուանել են այն երեք հսկայ կէտերը, որոնց վրայ յենուում է քաղաքի հայութիւնը: 1919ին չինական իշխանութիւնները պաշտօնապէս վաւերացրել են այդ կազմակերպութեան գոյութիւնը եւ իրաւունքները¹³: Ազգային Միութեան գլխաւոր ինդիւրն է եղել օգնել բոլոր կարիքաւորներին, ծերերին, որբերին, ինչպէս նաեւ պահպանել հայկական ինքնութիւնը համայնքի անդամների մէջ: Այդ նպատակով ազգային եւ եկեղեցական տօներին կազմակերպուել են թէյասեղաններ, հանրային եւ մշակութային զանազան միջոցառումներ: Բարեգործական ձեռնարկներն իրականացրել է Տիկնանց Օգնութեան Խումբը, որը զբաղուել է Փինանսների հայթայթմամբ եւ նուիրատուութիւններ հաւաքելով: Հաւանաբար այս կազմակերպութիւնն է հրատարակել հայերէն *Երկիր* երկշաբաթաթերթը:

Երբ 1919 Յունիսի 30ին Մայրագոյն Արեւելքում Ալեքսանդր Կոլչակի (1874-1920) հռչակած հանրապետութիւնը ճանաչել է Հայաստանի Հանրապետութիւնը, վերջինիս պաշտօնական ներկայացուցիչ է ընտրուել իրաւաբան, Իրկուցկի *Վեստնիկ Արմենիի* (Հայաստանի լրագրեր) թերթի հրատարակիչ Գրիգոր Սարգսի Չամոյեանը (Գրիգորի Սերգէյի Չամոն): Նոյն ժամանակ խորհրդում ՀՀ հիւպատոս է նշանակուել Սիբիրում եւ Մայրագոյն Արեւելքում հեղինակութիւն վայելող ճարտարագէտ Լեւոն Սուրինովը (Մուրինեան):

1919 Մայիսին, մօտ մէկ ամիս շարունակ խորհրդում կայացել է Սիբիրի եւ Մայրագոյն Արեւելքի հայերի առաջին համագումարը՝ միաւորելով այդ

տարածաշրջանում միմեանցից անջատ գործող հայկական կազմակերպութիւնները¹⁴։ Նման հաւաք կազմակերպելու գաղափարը միմեանցից անկախ յղացել են Վլադիվոստոկի Հայկական Յանձնախումբը¹⁵ եւ երեք հայ ուսանողներ։ Մայիսի 1ին պատգամաւորների մեծ մասը ժամանել է Խարբին, հնգօրեայ ոչ-պաշտօնական բանակցութիւններից յետոյ կազմուել է դաշնակցային խմբակցութիւն։ Համագումարի հանդիսաւոր բացումը տեղի է ունեցել Մայիսի 5ին՝ Խարբինի Ազգային Վարչութեան նախագահ, հաղորդակցական ճանապարհների ճարտարագէտ Լեւոն Սաֆարեանի ճառով։ Ուղերձներ են կարդացել Թիֆլիսի հայ եւ վրացական թատրոնի երբեմնի ղեկաւորներ Վարվառէ Մելիքեանը (1868-1928), Վահրամ Ազնաւուրեանը եւ այլք։ Մասնակից պատգամաւորները քսանվեցն էին, որոնց թւում՝ Ծայրագոյն Արեւելքում ՀՀ ապագայ հիւպատոս, Ճապոնիայում բնակուող գործարար տիկին Դիանա Աբգարը, Խարբինից՝ առեւտրականներ Յովհաննէս Գրձելեանը, Թիֆլիսում երբեմնի ունեւոր դասի ներկայացուցիչ եւ բարերար, Երեւանի մօտակայքում հիւանդանոց բացած Սուրէն Բուդաղեանը, նաեւ մի շարք հայեր ուսական Ծայրագոյն Արեւելքի տարբեր քաղաքներից (Ջրտա, Վլադիվոստոկ, Խաբարովսկ, Իրկուցկ, Օմսկ, Տոմսկ, Չելիաբինսկ, Բլազովեչչենսկ)։ Համագումարին ներկայ գտնուող Վասակ Տէր-Պօղոսեանը (Րաֆֆու Խենթի կրտսեր որդին) սկզբնապէս ընտրուել է նրա նախագահ¹⁶։ Համագումարն ընտրել է յանձնախումբ հետեւեալ կազմով՝ Դիանա Աբգար (պատուոյ նախագահ), Վասակ Տէր-Պօղոսեան (ատենապետ), Կարապետ Մինասեան (փոխատենապետ), Նազարէթ Դշխոյեան (քարտուղար), Արամ Սարգսեան (փոխքարտուղար)։ Համագումարը նաեւ ընտրել է վարչութիւն, որի կազմում են եղել Թադէոս Սիրունեանը (նախագահ), Վահրամ Նալբանդեանը (փոխնախագահ), Յարութիւն Միրզոյեանը (գանձապահ), Համազասպ Պսակեանը (քարտուղար) եւ Վասակ Տէր-Պօղոսեանը (լիազօր ներկայացուցիչ)։ Ֆինանսական յանձնախմբի նախագահ է ընտրուել առեւտրական գիտութիւնների պսակաւոր Յարութիւն Եակոբեանը, գանձապետ՝ Կարապետ Ասպետեանը։ Վերջինս (ծնունդով ախալցխացի) Խարբինի Կիտայսկայա փողոցում ունեցել է հրուշակեղէնի եւ շոկոլադի արտադրութեան գործարաններ եւ յայտարարել, որ իր երկու թանկարժէք տները կտակում է Հայաստանի կառավարութեանը, որպէսզի նրանց գնով Երեւանում բացուեն դպրոցներ։ Այդ տները գնահատուել են կէս միլիոն ոսկի։ Կտակի պաշտօնական գործողութիւնները կատարելուց յետոյ համապատասխան փաստաթղթեր են պատրաստուել՝ Հայաստան ուղարկելու համար¹⁷։

Համագումարի օրակարգի գլխաւոր եւ կարեւորագոյն հարցը եղել է Հայաստանին շուտափոյթ օգնութիւն հասցնելը, որի նպատակով կատարուել է հանգանակութիւն՝ հաշուի առնելով ողջ Ծայրագոյն Արեւելքում գտնուող հայերի ստուար թիւը (երեք հազար) եւ նրանց նիւթական բարեկեցիկ վիճակը։ Այդ գործն արդիւնաւէտ կատարելու համար գործունէութեան կենտրոն է որոշուել Խարբինը, որի հայ բնակիչների թիւը 1920ին եղել է 50¹⁸։ Որոշուել է նաեւ 18 տարեկանը լրացրած բոլոր հայերին տալ ՀՀ

անձնագրեր: Այդ որոշումները հրատարակուել են *Երկիր* եւ *Իրկուցկի Վեստնիկ Արմենիի* թերթերում: Վերոյիշեալ Ձամոյեանի նախաձեռնութեամբ «Հայ Ազգային Կենտրոնական Խորհուրդ»ը Խարբինում հիմնել է «Երկիր» բաժնետիրական ընկերութիւնը՝ նպատակ ունենալով առեւտրական կապեր հաստատել Հայաստանի եւ ռուսական Ծայրագոյն Արեւելքի, Չինաստանի եւ Ճապոնիայի միջեւ: Այս ընկերութիւնը փորձել է հագուստեղէն, շաքար, թէյ եւ այլ ապրանքներ ուղարկել Հայաստան¹⁹:

1920ի գարնանը Ծայրագոյն Արեւելքի հայութիւնը ձեռնամուխ է եղել իր հանգանակութիւնները Հայաստան հասցնելու գործին: Մէկ մարդատար եւ մէկ ապրանքատար վագոն է տրամադրուել Հայաստանի համար հաւաքուած բոլոր օգնութիւնները տեղ հասցնելու համար: Վագոններին պատկերուել է հայկական եռագոյն դրօշը եւ Փրանսերէն ու ռուսերէն գրուել է «Հայաստանի Հանրապետութեան Դիւանագիտական Ներկայացուցչութիւն»: Այս գործի ղեկավար է ընտրուել Ձամոյեանը՝ զինուորական կցորդով, թիկնապահով եւ պահակախմբով: Իրկուցկում Ձամոյեանին պատիւներով ընդունել է Կոլչակը: Այն հիւրանոցում, որտեղ իջեւանել է Ձամոյեանը, որոշ ժամանակ հայկական եռագոյն է պարգուել: Ձամոյեանը փորձել է Ծայրագոյն Արեւելքի հայերին ճանաչել տալ որպէս ՀՀ քաղաքացիներ: Նա բոլոր հայերին յանձնել է հայկական անձնագրեր, եւ բոլոր ազգերի ներկայացուցիչները, ինչպէս եւ ռուսական տեղական կառավարութիւնը ճանաչել են հայերին որպէս Հայաստանի քաղաքացիներ: Ձամոյեանը յարաբերութիւններ է մշակել նաեւ Իրկուցկում Ֆրանսիայի գլխաւոր ներկայացուցիչ Մատրայի, Ճապոնիայի դեսպան Կատուի (sic), Չեխոսլովակիայի ներկայացուցիչ բժիշկ Կլոսի եւ Լեհաստանի ներկայացուցիչ հետ: Իրկուցկում Ձամոյեանը ժողովի է հրաւիրել Սիբիրի եւ Ծայրագոյն Արեւելքի քաղաքների բոլոր հայկական յանձնախմբերին: Ժողովին ներկայ են եղել Տետէճեանը՝ Վլադիվոստոկից, Սաֆարեանը՝ Խարբինից, Պսակեանը՝ Մանչուրիայից, Մելիքեանը՝ Բլազովեչենսկից, Եակուբեանը՝ Իրկուցկից, ինչպէս նաեւ Նալբանդեանը, Վ. Տէր-Պօղոսեանը, Վ. Յարութիւնեանը եւ Ս. Եագուպեանը: Ժողովի նպատակներն են եղել Սիբիրում եւ Ծայրագոյն Արեւելքում ապրող հայերին զինուորագրել եւ վերադարձնել Հայաստան, անմիջապէս երկիր ուղարկել այն հայերին, որոնց կարիքը կայ: Ժողովը նպատակ է դրել, որ Սիբիրում եւ Ծայրագոյն Արեւելքում ապրող ամէն մի հայ 5000 ռուբլիով հոգայ մէկ հայ զինուորի համազգեստի ծախսը, ինչպէս նաեւ կազմակերպել մի առեւտրական ընկերութիւն, որը կը զբաղուի Հայաստան ապրանք փոխադրելու եւ առեւտրական կապեր մշակելու գործով²⁰: Ձամոյեանն իր խմբով հասել է Մանջուլի (Լուպին), որտեղ նրան դիմաւորել է տեղի հայ համայնքը: Երբ նա դուրս է եկել գնացքից՝ հաւաքուածները «Մեր Հայրենիք»ն են հնչեցրել: Այնուհետեւ Ձամոյեանը Ապրիլի 20ին հասել է Չանչուն, ապա՝ Շանհայ, որտեղ հանդիպել է թէյի եւ շաքարի առեւտրով զբաղուող երկու հայ վաճառականների՝ Ազատեան եւ Գաբալեան, որոնք պատրաստակամութիւն են յայտնել օժանդակութիւն ցուցաբերել ՀՀին: Ձամոյեանն այնուհետեւ Հոնկոնգում հանդիպել է տեղի դատա-

ւոր եւ նահանգապետ Հայազգի Սէթին, որը նոյնպէս Հայաստանին օգնելու իր մտադրութիւնն է յայտնել: Վերջապէս Չամոյեանը յայտնուել է ճապոն-իայում, այցելել Տոկիօ, Եոկոհամա, Կոբէ քաղաքները, հանդիպել Դիւանա Աբգարին, որից յետոյ ճանապարհ է ընկել Հայաստան: Սակայն հանգանակած գումարների մի մասը չի ծառայել նպատակին. մեծ եռանդով սկսուած գործը ձգձգումների պատճառով անփառունակ վերջ է ունեցել:

Պատմաբան Գեղամ Պետրոսեանի գնահատմամբ՝ «Սիբիրի եւ Հեռաւոր Արեւելքի հետ առնչութիւններն օրեկտի պատճառներով չտուեցին անհրաժեշտ արդիւնքները, սակայն կարեւոր էր հայ գաղութի հետ կապերի հաստատումը եւ նրա աշխուժացումը»²¹:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

1910ականների վերջին Ծայրագոյն Արեւելքում հայութիւնը սկսել է տարէջտարի աւելանալ, ուստի եւ հրամայական է դարձել սեփական եկեղեցի եւ դպրոց ունենալու պահանջը: 1915-1916ին չինաբնակ հայերն էջմիածնից թոյլտուութիւն են խնդրել խարբինում հայկական եկեղեցի կառուցելու. 83 ստորագրութիւն կրող մի նամակ-համախօսականով բարձրացրել են դրա անհրաժեշտութիւնը եւ կարեւորութիւնը՝ չինահայերին ուժացումից հետո պահելու համար: Գործին յատկապէս նախանձախնդիր է եղել խարբինի հայ համայնքի եռանդուն գործիչ բժիշկ Ստեփաննոս Մղտեսեանը: Էջմիածինը ընդառաջել է այդ խնդրանքին եւ թոյլատրել եկեղեցու կառուցումը²²: Սկսուել է դրամահաւաք չինաբնակ հայերից: Յատկապէս առատաձեռն են եղել Կարապետ Ասպետեանը (750 ոսկի ռուբլի) եւ խարբինի ու Չանչունի հայերը, որոնք եկեղեցու կառուցման նպատակով հաւաքել են 1207 ոսկի ռուբլի²³: 1918ին Արեւելա-չինական Երկաթուղու վարչութիւնը խարբինի Լիւօեանգ փողոցի անկիւնում, Սաղոփայա փողոցի 18 հասցէում 2500 քառակուսի մետր տարածութիւն անվճար տրամադրել է հայերին՝ հայկական եկեղեցի կառուցելու նպատակով: Եկեղեցու եւ կից կառոյցների շինարարութեան վերահսկման եւ շինանիւթերի մատակարարման գործով զբաղուել է ճարտարագէտ Միքայէլ Տէր-Յովակիմեանը: 1923 Սեպտեմբերի 5ին տեղի է ունեցել եկեղեցու հիմնարկէքը, որի ժամանակ Եղիշէ քահանայ Ռոստոմեանը հանդէս է եկել ճառով, կարդացել հայրապետական մաղթանք. կատարուել է մատաղի արարողութիւն²⁴: Մի քանի տարի տեւած շինարարութիւնից յետոյ 1923 Նոյեմբերի 18ին բացուել է Ծայրագոյն Արեւելքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայ առաքելական եկեղեցին՝ յարակից շէնքերով: Այն ընդգրկել է երեցատուն՝ քահանայի կացարանը եւ մի սրահ-հաւաքատեղի²⁵: 1933ին Եղիշէ քահանայի վախճանումից յետոյ չինաբնակ հայերը չորս տարի զրկուած են մնացել հոգեւոր հովիւից եւ հարսանեկան, կնունքի ու յուղարկաւորութեան ծէսերը ստիպուած կատարել են ռուս ուղղափառ եկեղեցում: Ի վերջոյ խարբինի Հայ Միութեան նախագահ Տէր-Յովակիմեանի նախաձեռնութեամբ եւ ջանքերով դիմում է յղուել Մայր Աթոռին՝ Չինաստան հոգեւոր հովիւ ուղարկելու խնդրանքով: Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Մուրադբէգեանի եւ Երուսաղէմի պատրի-

արք Թորգոմ Արք. Գուշակեանի հաւանութեամբ Մայրագոյն Արեւելքի հայոց հոգեւոր հովուութեան պաշտօնին է կոչուել Երուսաղէմի միաբան Ասողիկ վարդապետ Ղազարեանը (1909-1979): Ասողիկ վարդապետը այցելել է Չինաստանի հայաբնակ բնակավայրերը՝ ամէնուրեք կատարելով իր պաշտօնը, անցկացրել չինաբնակ հայերի մարդահամար, ծաւալել աշխոյժ գործունէութիւն՝ սովորեցնելով հոգեւոր եւ ազգային երգեցողութիւն, դասաւանդելով հայոց լեզու եւ պատմութիւն, Շանհայում հիմնել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մասնաճիւղ: Ասողիկ վարդապետի ջանքերով վերանորոգուել եւ ընդլայնուել են Խարբինի եկեղեցուն կից տարածքները: Լինելով Երուսաղէմի քաղաքացի, որը 1930ականներին գտնուել է բրիտանական հովանաւորութեան ներքոյ, Ասողիկ վարդապետը 1941-1945 բանտարկուած է մնացել Մուկդէնի բրիտանական եւ ամերիկեան քաղաքացիների համար նախատեսուած ճապոնական համակենտրոնացման ճամբարում: 1945 Հոկտեմբերի 19ին Գէորգ Զ. Կաթողիկոսին գրած նամակում վարդապետը յայտնել է, որ չորս տարի ճապոնական գերութեան մէջ լինելով՝ ինքը կարուած է եղել աշխարհից եւ կաթողիկոսի ընտրութեան լուրը նա իմացել է խորհրդային բանակի հայ զինուորներից, «որք Ռուսաց բանակին հետ եկան այստեղ եւ ազատագրեցին զմեզ ճարմացուց ձեռքէն»²⁶: Ասողիկ վարդապետը Չինաստանում մնացել է մինչեւ 1949, այնուհետեւ պաշտօնավարել տարբեր երկրներում, մասնաւորապէս Իրաքում:

ՀԱՅԵՐԸ ԽԱՐԲԻՆՈՒՄ

Ի. դարի սկզբին հայերի թիւը Չինաստանում եւ այլ քաղաքներում մեծացել էր յատկապէս ռուսական Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից յետոյ, երբ բազմաթիւ հայեր, մեծ մասամբ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան անդամներ կամ համակիրներ, խուսափելով համայնավար հալածանքներից, փախել են Չինաստան՝ այնտեղից ԱՄՆ մեկնելու նպատակով: Ինքնին հասկանալի է, թէ ինչպիսի տանջանքների եւ զրկանքների գնով են այդ հայերը հասել Չինաստան: Այսպէս, Չինաստանում հաստատուած Դարալազեագի Ազադակ գիւղի բնակիչ Մկրտիչ Շարոյեանը հայ մամուլին ուղարկել է իր արկածալից ճանապարհորդութեան պատմութիւնը, թէ ինչպէս է 1924ին դաշնակցական լինելու մեղադրանքով ձերբակալուել, բանտարկուել, ապա ազատ արձակուելուց յետոյ մի փոքր խմբով եւ չինացի սպաների ուղեկցութեամբ Մոսկուայից հասել Վլադիվոստոկ, ապա՝ Չինաստան. «Երկու գիշեր առանց կանգ առնելու քալեցինք սարերով եւ անտառներով: ...Նոյեմբերի 17ի առաւօտեան ժամը 8ին հասանք չինական կայարան մը, այստեղից գնացքով Խարբին քաղաքը հասանք եւ, կինս եւ չորս ընկերներս: Ահա մեր ճանապարհորդութիւնը Երեւանից մինչեւ Վլադիվոստոկ, Խարբին, մօտաւորապէս 13000 վերստ»²⁷ (մօտ. 14.000 քմ.): Մէկ այլ հայ՝ Շանհայում հաստատուած կարսեցի Մկրտիչ Յակոբեանը, Գիւմրիի եւ Թիֆլիսի ճանապարհով հասել է Չինաստան, այնտեղից Ամերիկա անցնելու մտադրութեամբ, որտեղ «արդէն կորսուած զգացի ինքզինքս: Չինումայինը մանկութեանս օրերուն

հեթիաքներու մէջ էի լսում, եւ այսօր ինքս չիմարեմ աւելի լաւ եմ խօսում, քան հայերէն»²⁸: Իր թղթակցութիւնը Յակոբեանն աւարտել է «Տէր Իմ, Դու Խղճա Հայ Ազգիս» բանաստեղծութեամբ: Իսկ Չինաստանում ծնուած Երուանդ Մարգարեանը վկայել է, որ Խարբինում գտնուող ամուսնուն միանալու նպատակով իր գոքանչը Մոսկուայից մինչեւ չինական սահման հասել է մէկ տարում՝ ճանապարհին ստիպուած լինելով վաճառել իր ողջ ոսկեղէնը, այնուհետեւ ուրիշ փախստականների հետ ապօրինի ճանապարհով կտրել-անցել է խորհրդա-չինական սահմանը²⁹:

Չինաստանում ապաստանած հայերը երբեմն դիմել են հայ մամուլին՝ իրենց կորած ազգականներին գտնելու խնդրանքով: Այսպէս, 1920ին Խարբին քաղաքից Երեւանի Յառաջ օրաթերթին են դիմել էմանուէլ Դիլաքեանը, Ռուբէն Բաբայեանը եւ Արամ Սարգսեանը՝ խնդրելով իրենց հետ կապ հաստատել Բոսթոնի Հայրենիքի կամ Խարբինի Հայկական Յանձնախմբի միջոցով³⁰:

Չինաբնակ Համազասպ Պսակեանի դասակարգմամբ՝ Ծայրագոյն Արեւելքի հայութիւնը ունեցել է հետեւեալ սոցիալական կազմը՝ ա) աքսորեալներ³¹, բ) արկածախնդիրներ, գ) Արեւելա-չինական եւ Սիբիրեան Երկաթուղու շինարարութեան ծառայողներ, դ) փախստականներ: Արկածախնդիրների մէջ պէտք է նշել Մանջուլիում թմրեցուցիչների, սախարինի եւ այլ ապրանքների մաքսանենգութեամբ զբաղուող հայերին, որոնց մասին յիշել է Պսակեանն ինքը. «Այսպիսի խայտաբղետ հասարակութենէ մը շօշափելի դրական գործունէութիւն սպասել՝ եթէ ոչ անկարելի, գէթ չափազանց դժուար էր», եզրակացրել է նա³²:

Պահպանուել են Չինաստանում բնակուող հայերի մարդահամարի տուեալները: 1910-1924ին Եղիշէ քահանան արձանագրել է 415 ծնունդ, 233 պսակ եւ 104 մահ³³: 1925ին Խարբինի հայերի թիւը եղել է 287³⁴: 1927ի տուեալով հայերը Չինաստանում բնակուել են հետեւեալ քաղաքներում՝ Տիենծին, Շանհայ, Խայլար, Պոզրոնիչնի, Մանջուլի, Յիցիկար, Չանչուն, Մուկղէն (այժմ՝ Շենիան), Դայրէն եւն.: Նրանց մէջ եղել են երկու բժիշկ, երկու փաստաբան, մի քանի ուսուցիչ եւ հաշուապահ, մէկ լրագրող, մէկ քահանայ, մնացածը՝ մանր առեւտրականներ եւ բանուորներ³⁵: Իսկ ըստ 1930ին Բոստոնի Հայրենիք ամսագրում տպագրուած մի հաղորդագրութեան, որն ուղարկել է Եղիշէ քահանան, Չինաստանի հայերի տարաբաշխումը եւ թուաքանակն ունեցել է հետեւեալ պատկերը. Խարբին՝ 271, Մանջուրիա (Մանջուլի)՝ 80, Շանհայ՝ 54, Տիենծին՝ 47, Չանչուն՝ 41, Խայլար՝ 17, Մուկղէն՝ 13, Ծինդաօ՝ 10, Յիցիկար՝ 9, Դայրէն՝ 8, Ինգօու՝ 6, Անտա, Պոզրոնիչնի եւ Իմիամբօ՝ Յական, Բուխեզա եւ Խանդախեցի՝ 2ական: Ընդհանուր թիւը կազմել է 579 հոգի³⁶: (Նկատի առնենք, որ Չանչունը եւ Դայրէնը այն ժամանակ եղել են Ճապոնիայի տիրապետութեան ներքոյ): Յաջորդ տարի տպագրուած վիճակագրական տուեալները գրեթէ նոյնն են. ընդհանուր թիւը՝ 516, Խարբին՝ 271, Մանջուլի՝ 80, Շանհայ՝ 54, Տիենծին՝ 47, Չանչուն՝ 41, Մուկղէն՝ 13, մնացածը ցրուած են 10ից աւելի քաղաքներում³⁷: Երկու տարի անց՝ 1933ին վերաբերող մէկ այլ փաստաթուղթ, որ պահուում է Հա-

յաստանի Ազգային Արխիվում³⁸, այլ թուեր են ներկայացվում. *Խարբին*՝ 560, *Մանչուրիա*՝ 160, *Շանհայ*՝ 90, *Չանչուն*՝ 78, *Տիենծին*՝ 70, *Մուկդէն*՝ 45, *Հոնկոնգ*՝ 20, *Մինդաո*, *Տենչէն*, *Ռայլին* եւ այլ քաղաքներում՝ 200: Իսկ 1937ին չինահայութեան տարաբաշխումն ունեցել է հետեւեալ պատկերը. *Խարբին*՝ 350, *Շանհայ*՝ 206, *Դայլին*՝ 34, *Չանչուն* եւ *Մինդաո*՝ 15ական, *Մուկդէն*՝ 7³⁹:

Ինչպէս տեսնում ենք, թուերն անհամապատասխան են, բնակչութեան աճը եւ նուազումը՝ տարերային, այնպէս որ սոյն տուեալները հարիւր տոկոս հաւաստի չեն կարող համարուել:

Չինահայութեան հոգեւոր առաջնորդ Ասողիկ վարդապետը 1937ին *Մրոնում* հրատարակել է *Չինաստանի հայերի հետ իր հանդիպումների մասին*, տուել վիճակագրական տուեալներ: *Չինաբնակ հայերը բոլոր ճանաչել են մէկմէկու եւ հետաքրքրուել միմեանցով*: Նրանք ստացել են Ամերիկայում, Եւրոպայում եւ Եգիպտոսում լոյս տեսնող հայերէն լրագրեր: Բոլորն էլ եղել են ընտանիքի տէր, ունեցել զաւակներ, որոնք յաճախել են օտար դպրոցներ: Նրանք արեւելահայեր են, բացի *Տիենծինի հայերից*, որոնք արեւմտահայեր են: *Գրեթէ ամէնուրեք, քիչ բացառութիւններով, հայերը զբաղուել են հացեղէնի եւ քաղցրաւենիքի պատրաստութեամբ եւ վաճառքով*: Նիւթապէս եղել են բարեկեցիկ, մեծամասնութիւնը՝ նուիրուած ազգային կեանքին: Հիմնականում ամուսնացել են համայնքի մէջ, թէեւ եղել են ամուսնութեան դէպքեր ուսանների եւ այլ ազգերի ներկայացուցիչների (սակայն ոչ՝ չինացիների) հետ⁴⁰: Սակայն *Չինաստանում վաղուց հաստատուած հայերի մի մասն աստիճանաբար օտարացել է՝ իրեն հեռու պահելով ազգային կեանքից*: Ժամանակակից վկայութեամբ՝ «Երբ իրենց դիմում կ'ըլլայ նիւթական աջակցութեան համար, անոնք կու տան այնչափ, որ չըսուի, թէ չտուին: Այս դասակարգին կը պատկանին գրեթէ բոլոր հարուստները»⁴¹:

Ինչպէս նշուեց, ամէնից մեծ թուով հայեր բնակուել են *Խարբին քաղաքում*: Հիւսիս-արեւելեան *Չինաստանի կենտրոնը հանդիսացող 1898ին հիմնուած եւ մէկ միլիոն բնակչութիւն ունեցող այս քաղաքը 1920-1930ականներին եղել է ամենաբազմազգ քաղաքը Մայրագոյն Արեւելքում (այստեղ բնակուել են 53 տարբեր ազգերի ներկայացուցիչներ⁴²): Խարբինն անուանել են «արեւելեան Սանկտ-Պետերբուրգ», այն համարուել է տարածաշրջանում սպիտակ ուս տարագիրների ոչ-պաշտօնական մայրաքաղաքը եւ ժամանակի մեծագոյն ուսական կղզեակն արտասահմանում⁴³: Ազգերի, լեզուների եւ կրօնների այդ խառնարանում հայերն ապրել են կղզիացած, իսկ նրանց շփումները սահմանափակուել են ուս գաղթականներով: Նրանք մեծ մասամբ եղել են Հայաստանի տարբեր գաւառներից (Արցախ, Սիւնիք, Ջաւախք) եւ Վրաստանից, այսինքն՝ նախկին Ռուսական Կայսրութեան նահանգներից, եւ լինելով ուսախօս եւ մշակութապէս ուսաներին մօտիկ՝ ընկալուել են որպէս ուս գաղթականութեան մի ճիւղը՝ պահպանելով հանդերձ իրենց ընկերային եւ հոգեւոր անկախութիւնը:*

Հայերը *Խարբինում* զբաղուել են հիմնականում մանր առեւտրով: Ինչպէս նշել է *Երուանդ Մարգարեանը*, նախամասցէթունկեան ժամանակաշրջանի Չինաստանում տեղի բնակիչները բաւականաչափ բարեկամաբար են տրամադրուած եղել օտարերկրացիների հանդէպ՝ նպաստելով նրանց սեփական գործ հիմնել եւ լինել ինքնաբաւ⁴⁴: Եթէ Չինաստանի արեւելքում բնակուող հայերը մեծ մասամբ եղել են երկաթուղու ընկերութեան ծառայողներ, երկրաչափներ, մեքենագէտներ, ճարտարագէտներ, շինարարներ, բժիշկներ, փաստաբաններ, իրաւաբաններ եւ արհեստաւորներ, ապա հիւսիսում ապրողները՝ առեւտրականներ եւ հրուշակագործներ: Վերջին պարագան յատկանշական է, քանի որ հայերն անմիջապէս օգտուել են շինացիներին բնորոշ քաղցրասիրութիւնից՝ հիմնելով բազմաթիւ հրուշակարաններ, հացատեսակների եւ քաղցրաւենիքի խանութներ՝ պատրաստելով շինացիներին մեծ մասամբ անծանօթ ռուսական, կովկասեան եւ եւրոպական թխուածքեղէն: 1926ի դրութեամբ խարբինահայերի մէջ եղել են նաեւ մեծ թուով արհեստաւորներ, չորս բժիշկ, մէկ իրաւաբան, չորս ճարտարագէտ եւ ռուսանոց երիտասարդներ⁴⁵: 1928ի վիճակագրութիւնը աւելի որոշակի թուեր է տալիս՝ 17 արհեստաւոր, 7 տանտէր, 6 ռուսանոց, 5 ծառայող տարբեր հիմնարկներում, 3 փռապան եւ մէկ իրաւագէտ⁴⁶:

Արեւելահայ գաղթականները մեծ մասամբ եղել են ՀՅԴ անդամներ եւ համակիրներ, այս կամ այն չափով հալածուած բոլշեւիկների կողմից եւ խիստ հակախորհրդային կողմնորոշմամբ⁴⁷: Նրանք Չինաստանում էլ շարունակել են իրենց գործունէութիւնը, տարածել կուսակցութեան գաղափարները եւ սերունդներին դաստիարակել այդ ոգով, բաժանորդագրուել միայն դաշնակցական մամուլին, յատկապէս *Յառաջին* եւ *Հայրենիքին*: Կայ վկայութիւն, որ անգամ չինահայերի մէջ գործել է ցեղակրօն երիտասարդների ուխտ՝ 15-20 հոգուց բաղկացած⁴⁸: Յատկանշական է, որ անգամ հեռուոր Չինաստանում նրանք երբեմն հետապնդուել են: Երբ 1924ին Պեկինում կնքուել է խորհրդա-չինական համաձայնագիր, ըստ որի չինական հեռուորարեւելեան երկաթուղին անցել է չին-խորհրդային վերահսկողութեան տակ, խորհրդային ներկայութիւնն ուժեղացել է *Խարբինում*: Բոլշեւիկները սկսել են թափանցել Չինաստան, ՀՅԴ անդամները սկսել են զգուշանալ եւ թաքնուել, քանի որ այս շրջանում 800ից աւելի մարդ է ձերբակալուել, ներառեալ երկու հայ⁴⁹:

1921ից *Խարբինում* հայ կեանքն աշխուժացել է յատկապէս բժիշկ Մղտեսեանի ջանքերի շնորհիւ: Այս գործչին է պարտական *Խարբինի* հայութիւնն իր եկեղեցու, ինչպէս նաեւ դպրոցի եւ երիտասարդական մարզական միութեան ստեղծման համար: Մղտեսեանը յաջողեցրել է հիմնել նաեւ հայկական բուժարան՝ կազմակերպելով չքաւոր հայերի եւ օտարազգիների ձրի բուժօգնութիւնը, որն իրականացրել է բժիշկներ Ծերմազանեանի, Եղուպեանի, Ոսկանեանի եւ տիկին Բաղալեանի հետ միասին:

Հայ Ազգային Վարչութիւնն իրաւասու է դարձել քննել հայերի միջեւ ծագած գփտութիւնները եւ հարկ եղած դէպքում տուգանել յանցաւորներին: *Խարբինի* հայերը կազմել են 46 կէտից բաղկացած կանոնադրութիւն,

որի առաջին կէտում ընդգծուել է Չինաստանում ապրող բոլոր հայերի համար ազգային միասնութեան գաղափարի տարածումն ու պահպանումը: Այս կանոնադրութիւնը, որ ռուսերէն լոյս է տեսել Խարբինում, հաւանաբար 1922ին, վաւերացուած Խարբինի գլխաւոր ոստիկանական վարչութեան կողմից:

1925 Դեկտեմբերի 13ին Խարբինում ստեղծուել է ուկրաինացի եւ հայ ուսանողների միութիւն, որի գլխաւոր նպատակն է եղել հետապնդել Ուկրաինայի եւ Հայաստանի պետական եւ ազգային կատարեալ անկախութիւնը, ուկրաինական լայն շրջանակներին ծանօթացնել հայ դատը եւ հայ ժողովրդին: Այդ առթիւ միութիւնը նպատակադրել է կազմակերպել դասախօսութիւններ՝ ուսումնասիրելով յատկապէս Ուկրաինայի եւ Հայաստանի քաղաքական եւ տնտեսական վիճակը⁵⁰:

1926 Նոյեմբերի 21ին Խարբինում բացուել է Ծայրագոյն Արեւելքի առաջին հայկական դպրոցը՝ դարձեալ հիմնականում Մղտեսեանի ջանքերով: Այդ օրը մեծ ցնծութիւն է եղել խարբինահայութեան համար, բոլորն ուրախութիւնից արտասուել են եւ սփռփուել, որ այդուհետ ուծացման եւ օտարացման դէմն առնելու են: Այդ առթիւ հայկական եկեղեցում մատուցուել է պատարագ եւ կատարուել դպրոցական մաղթանք: Նոյն օրն իսկ արձանագրուել են 33 աշակերտներ: Ուսուցիչն է եղել Եղիշէ քահանան: Դպրոցում աւանդուել են հայոց լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, Սուրբ Գրքի պատմութիւն: Դպրոցի բոլոր ծախսերը հոգացել է համայնքի վարչութիւնը⁵¹: 1928ին հայկական դպրոցի աշակերտները բաւական յաջող են յանձնել աւարտական քննութիւնները՝ յարուցելով բոլորի զարմանքը, թէ ինչպէս են կարողացել այդքան առաջադիմել ութ ամսուայ ընթացքում⁵²:

1927ին Չինաստան է այցելել մի հայորդի, որը Հայրենիքին Յունուարի 12ին Խարբինից ուղարկած մի թղթակցութեան մէջ նկարագրել է իր այցելութիւնները չինական քաղաքներ եւ հանդիպումները տեղի հայերի հետ: Նա նախ եղել է ճապոնական տիրապետութեան տակ գտնուող Չանչուն քաղաքում, որի հայերի թիւը յիշել է՝ 46, բոլորը՝ վաճառականներ: Նրանք ունեցել են ազգային յանձնախումբ, 1924ից գործող նախակրթարան-դպրոց, որի ուսուցիչն էր Սերովբէ Բահաթրեանը: Նախապէս դպրոցն ունեցել է 10 աշակերտ, սակայն ուսուցչի հանդէպ սկսուած անբարեացակամութեան պատճառով չորս աշակերտի տեղափոխել են ռուսական դպրոց: Մուկդէնի հայերի թիւը եղել է 16՝ արհեստաւորներ եւ պաշտօնեաներ: Ունեցել են ազգային ենթայանձնախումբ, որը կապ է պահել Խարբինի հայ համայնքի յանձնախմբի հետ: Նրա վարչութեան անդամներն են եղել ճարտարագէտ Լ. Ղորղանեանը (նախագահ), նախկին սպայ Լ. Պոպովեանը (քարտուղար եւ հաշուապահ) եւ Լ. Սարգսեանը (գանձապահ): Այցելուն եղել է նաեւ Տիենծին քաղաքում, նշել, որ նրա 50 հայ բնակիչները թուրք-խայի տարբեր քաղաքներից են, բոլորն էլ՝ բարեկեցիկ վիճակում: Նրանց խօսակցական լեզուն եղել է անգլերէնը եւ թուրքերէնը, ապրել են կղզիացած, ազգային-հասարակական կազմակերպութիւններ չեն ունեցել եւ չեն

էլ ձգտել ազգային կեանքի: Այդուհանդերձ, մի քանի տարի առաջ հանգանակել են 2000 դուլար՝ Հայ որբերի համար: Իսկ Դայրէնում հանդիպել է երեք հայի, երկուսը՝ վաճառական՝⁵³:

1927 Յունիսի 19ին կայացել է Խարբինի Հայ համայնքի տարեկան ընդհանուր ժողովը: Վարչութեան անդամներ են ընտրուել դարձեալ «երեք կէտերը»՝ Մղտեսեանը, Տէր-Յովակիմեանը եւ Մելիք-Օհանջանեանը, նաեւ կաթնատնտես Վ. Նազարեանը եւ վաճառական Ա. Սարգսեանը: Զեկուցուել է, որ հայկական դպրոցի երկսեռ աշակերտների թիւը 28 է՝⁵⁴:

Խարբինի Հայ համայնքում գործել են նաեւ ՀՅԴ մասնաճիւղ, «Ազգային Ընկերութիւն»ը, «Երիտասարդաց Գրական-Գեղարուեստական Միութիւն»ը, «Արծիւ» մարմնամարզական միութիւնը (հիմնուած 1925ին, մասնակցել են նոյն թուականի Սեպտեմբերին կայացած ողիմպիական խաղերին եւ արժանացել մրցանակների), «Հայ Երիտասարդների Ակումբ»ը (որ մտադիր է եղել հրատարակել *Միութիւն* հայերէն-ռուսերէն պարբերականը), «Հայ Տիկնանց Միութիւն»ը (ղեկավար՝ բժշկուհի Աննա Եագուպեան, քարտուղար՝ Շուշանիկ Պողոսեան), որը կազմակերպել է հայերէնի դասընթացներ, «Հայ Թատերասիրաց Ընկերութիւն»ը, որը ներկայացրել է հայերէն եւ ռուսերէն բեմադրութիւններ եւ «Հայ Երաժիշտների Խումբ»ը, որը ելոյթներ է ունեցել համայնքի միջոցառումների ժամանակ: Խարբինահայ միութիւնները նշել են ազգային-եկեղեցական տօները, աղօթատանը կամ համայնքային կենտրոնում կազմակերպել միջոցառումներ, որոնք ուղեկցուել են ազգային երգ ու արտասանութեամբ: ՀՅԴն եւ նրա համակիր չինաբնակ հայերը մշտապէս նշել են Հայաստանի անկախութեան օրը՝ Մայիսի 28ը: Այսպէս, 1928ին այդ տօնակատարութեանը մասնակցել են երգչախումբ եւ նուագախումբ, ներկայացուել են կենդանի պատկերներ՝ «Զէյթունցի Հերոսներ», «Աղօթք Որբերի Համար», «Մայր Հայաստանը՝ Մինչեւ 1918», «Մայր Հայաստանը՝ 1918, Մայիս-1920, Դեկտեմբեր»⁵⁵: 1933ի Մայիսի 28ի տօնին ներկայ են եղել նաեւ Խարբինի վրացի, ռուս եւ մանչուրիացի համայնքների ներկայացուցիչները: Ելոյթներ են ունեցել Հայոց Ազգային Վարչութեան նախագահ Մղտեսեանը, Խարբինի Վրացական Համայնքի նախագահ բժիշկ Ն. Ճիւղարիանին, Ռուս Տարագիրների Գործադիր Մարմնի ներկայացուցիչ Ե. Վ. Լուտչեւը: Պաշտօնական ելոյթներից յետոյ Խարբինի Երիտասարդական Միութիւնը հանդէս է եկել գրական-գեղարուեստական փոքր ծրագրով: Կարինէ Պսակեանն արտասանել է Աւետիք Իսահակեանի «Էյ Ջան, Հայրենիք»ը, երգել են օրիորդ Մ. Թէյմուրազեանը, Ս. Ռոստոմեանը, որը «Երազ» երգը կատարել է տիկին Մնացականեանի (դաշնամուր) եւ Ա. Մղտեսեանի (ջութակ) նուագակցութեամբ: Երեկոյին ներկաների թիւը 150ից աւելի է եղել⁵⁶: 1928ին Խարբինում Ազգային Յանձնախմբի, Մնողների Յանձնախմբի եւ հայկական դպրոցի ուսուցիչների ջանքերով մեծ հանդիսաւորութեամբ նշուել է Վարդանանց տօնը, ելոյթ է ունեցել «Արծիւ» նուագախումբը, դարձեալ ցուցադրուել են կենդանի պատկերներ՝ «Հայկական Դիւցազնամարտը», «Հայ Հերոսներ», «Հայդուկների Խումբը», «Վարդանի Դիակի Որոնումը» եւ «Վերածնունդ»⁵⁷: Վարդանանց տօնը

Խարբինում նշուել է նաև 1930ին, ելոյթ է ունեցել երգչախումբը՝ Հրաչեայ Ռոստոմեանի ղեկավարութեամբ⁵⁸: 1929 Հոկտեմբերի 27ին Խարբինի հայերը տեղի համայնքի անդամների եւ օտարազգիների մասնակցութեամբ տօնել են Եղիշէ Դուրեան պատրիարքի յոբելեանը, մատուցուել է պատարագ, ելոյթ է ունեցել 22 հոգիանոց քառաձայն երգչախումբը⁵⁹:

1930ին Խարբինի հայ համայնքի ընդհանուր ժողովը հաստատել է վարչութեան նախկին կազմը, իսկ վերստուգիչ յանձնաժողովի անդամներ են ընտրուել Սերովբէ Բահաթրեանը, ուսանողներ Հ. Ռոստոմեանը եւ Ս. Մղտեսեանը⁶⁰: Այս ժամանակաշրջանում Խարբինի հայերը, բոլոր չինաբնակների պէս, մատնուել են որոշ տնտեսական տագնապների՝ տեղական դրամի՝ ոսկու եւ ճապոնական ենի համեմատութեամբ անկում կրելու պատճառով: Չնայած այդ հանգամանքին՝ հայկական դպրոցը հինգերորդ տարին շարունակել է իր գործունէութիւնը, երկսեռ աշակերտների թիւը աճել է, հայկական դպրոցում սովորելու ցանկութիւն են յայտնել նաև մի շարք այլազգիներ⁶¹:

1931 Նոյեմբերին Խարբինում մահացել է ականաւոր հայ թարգմանիչ եւ իրանական դիւանագիտութեան յայտնի դէմք Յովհաննէս Խան-Մասեհեանը: Նա 1930ին նշանակուել էր Իրանի դեսպան Ճապոնիայում, սակայն ծանր հիւանդութեան պատճառով հրաժարական էր ներկայացրել: Տոկիոյից Թեհրան ճանապարհին նա մահացել է Չինաստանում: Նրան Խարբինում սխալմամբ յուղարկաւորել են իսլամական ծէսով, ինչն առաջացրել է տեղի հայերի վրդովմունքը: Խարբինի Հայոց Ազգային Վարչութիւնը պահանջել է Մասեհեանի դագաղը: Համապատասխան փաստաթղթեր ներկայացնելուց յետոյ վարչութեան կազմը ստացել է այն, Չինաստան ժամանած իրանահայատակ հայերի եւ տեղի թաթար համայնքի ներկայութեամբ դագաղը բերուել է հայկական եկեղեցի, կատարուել է հոգեհանգստի արարողութիւն եւ հոգեճաշ է տրուել քաղաքի հայկական ճաշարաններից մէկում⁶²:

Ինչպէս նշուեց, խարբինահայերը հրատարակել են *Երկիր* երկշաբաթաթերթը եւ ռուսալեզու *Վեստնիկ Արմենիին*, որոնք կարճատեւ գոյութիւն են ունեցել: Սրանցից բացի Համազասպ Պսակեանը եւ Մելիքեանը լոյս են ընծայել *Աւետիս* տարեգիրքը՝ երգիծանկարներով⁶³: Յաւօք, մեզ չի յաջողուել տեսնել այդ պարբերականներից գոնէ մէկ նմուշ:

Խարբինահայերն ապրել են մշակութային կեանքով: 1919-1922՝ Խարբինի հայ եւ ռուս թատերասէրների ուժերով տրուել են մի շարք ներկայացումներ, որոնք հիմնականում խաղացուել են Առեւտրական ժողովարանի դահլիճում կամ Չուրին ակումբում: 1921 Փետրուարի 2ին Խարբինի Առեւտրական ժողովարանի դահլիճում ներկայացուել է Գաբրիէլ Սունդուկեանի *Պեպօն*: Այն բեմադրել է 1918ին Չինաստան հաստատուած թիֆլիսահայ բեմի դերասանուհի Վարվառէ Մելիքեանը: Նա էլ հանդէս է եկել Շուշանի դերում: Միւս դերերը կատարել են Բուդաղեան ամուսինները (Մելիքեանի դուստրը եւ փեսան), Վ. Նազարեանը, Օ. Տէր-Յակոբեանը եւ Ս. Յովհաննիսեանը⁶⁴: Աւելի ուշ, Խարբինի Հայ Երիտասարդական Խմբակը 1940ա-

կանների վերջ-1950ականների սկզբին ներկայացրել է մի շարք սիրողական բեմադրություններ՝ «Անուշ» օպերան, «Անահիտ» դրաման, «Արշին Մալ Ալան» երաժշտախորը, «Աւարայրի ճակատամարտը» եւն.: Դրանք բեմադրել է Կարինէ Պսակեանը, որը եղել է նաեւ դրանց գլխավոր ղեկավարությունը⁶⁵ :

Խարբինասայերը, նաեւ օտարագրները, յաճախ առիթ են ունեցել լսել Արծուրիկ Ռոստոմեանի (1909-1927) երգեցողությունը զանազան հանդիսությունների ժամանակ: Այս վաղամեռիկ երգչուհին եղել է միակ հայ աղջիկը Չինաստանում, որ կարողացել է սահուն հայերէն խօսել, գրել եւ կարգալ, ինչն արտաուոց է եղել Մայրագոյն Արեւելքում մեծացած մէկի համար⁶⁶ :

1930 Ապրիլի 6ին Խարբինում նշուել է Աւետիս Ահարոնեանի գրական գործունէութեան 40ամեակը: Բժիշկ Միտեսեանը ռուսերէն բացման խօսք է ասել, որից յետոյ հնչել է «Մեր Հայրենիք»ը՝ Հրահայ Ռոստոմեանի ղեկավարած 20 հոգիանոց երգչախմբի կատարմամբ: Ուսանող Ս. Միտեսեանը ռուսերէն բանախօսել է Ահարոնեանի մասին, ելոյթ է ունեցել Եղիշէ քահանան, կարդացուել են հայերէն եւ ռուսերէն հատուածներ Ահարոնեանի գործերից: Երեկոն աւարտուել է երգերով, որոնցից ուշագրաւ է եղել Արտաշէս Յովհաննէսի կատարած «Երազ»ը⁶⁷ :

1936ին չինահայերը մեծ խանդավառութեամբ են ընդունել սփիւռքահայ գաղթավայրերը հիւրախաղերով այցելող նշանաւոր նուագածու քեմանչիստ Ռուբէնի (Գարախանեան, 1892-1983) ելոյթները: Ուղեւորութեան ժամանակ նրան ընկերակցել է կինը՝ դաշնակահարուհի Ազնիւ Մանուկեանը: Ռուբէնի քամանչայի նուագը լսել են Պեկին, Խարբին, Շանհայ, Ֆիտտտէն, Չինչաուա, Տիենծին, Դայրին եւ Մանջուլի քաղաքներում: Քեմանչիստ Ռուբէնի նախաձեռնութեամբ առանձին հայկական համերգ է կազմակերպուել Շանհայում⁶⁸ : Չինական մամուլը գովեստով է խօսել հայ արուեստագէտի մասին՝ հրատարակելով նրա լուսանկարը: «Տաղանդաւատ Ռուբէնի ձեռքերում քամանչան հաւատարմօրէն արտայայտում է մարդկային հոգին»՝ գրել է Շանհայի China Pressը⁶⁹ : Քեմանչիստ Ռուբէնին առաջարկել են շահաւէտ պայմաններով մնալ Չինաստանում, սակայն նա մերժել է՝ պատճառաբանելով, որ պէտք է մեկնի՝ հայ արուեստը տարածելու Եւրոպայում եւ Ամերիկայում⁷⁰ : Յետագայում նա պատմել է Չինաստանի մասին. «Այնքան գոհ էինք, որ կարծես հոն պիտի հաստատուէինք վերջնականապէս: Բաւական երկար մնացինք... Ժամանակի ընթացքին կազմեցինք երգչախումբ մը եւ սօնեցինք Ապրիլ 24ը: ...Սակայն օր մը, պէտք է մեկնէինք. կեղոն մը, տեղ մը չունէինք»⁷¹ :

ՀԱՅԵՐԸ ՇԱՆՀԱՅՈՒՄ

Մինչեւ Բ. Ալխարհամարտը մեծ թուով հայեր (չուրջ 600) բնակուել են նաեւ Շանհայում: 1926ին Շանհայում բնակուել է 25 հազար օտարերկրացի, որոնցից 15 հազարը՝ ռուս սպիտակգուլարդիականներ⁷² : Հայերի մեծ մասը եղել են կովկասցիներ, արթուն եւ շէն վաճառականներ, պատուական ազգայիններ⁷³ : 1936 Ապրիլ 25ին հիմնուել է Շանհայի Հայ Երիտասար-

դական Միութիւնը (ՀԵՄ)՝ որպէս տեղի Հայ Օգնութեան Միութեան մասնաճիւղ: Այն հետապնդել է գերազանցապէս կրթական եւ մշակութային նպատակներ: Միութեան ատենապետ է ընտրուել Վարդան Չանդալեանը: Կազմակերպել են հայերէնի երեկոյեան դասընթացներ՝ փոքրերի եւ մեծերի համար, նշել ազգային տօները: Պատրաստուել են հիմնել գրադարան եւ մշտական գործող դպրոց⁷⁴: 1937ին, այս միութիւնը, տեղի ազգայիններից Մելիք Նուպարեանի միջոցով փորձել է քաղաքում բացել հայկական աղօթատուն⁷⁵: 1938ին Շանհայի ՀԵՄը ընտրել է նոր յանձնախումբ հետեւեալ կազմով՝ Վարդան Չանդալեան (պատուոյ նախագահ), Ֆրանց Չանդալեան (պատուոյ քարտուղար), Պօղոս Չանդալեան (պատուոյ գանձապահ), Ամալիա Կարապետեան, Վարիա Պետրոսեան (յանձնախմբի անդամներ): Միութիւնը 1938ին ունեցել է 30 անդամ: Գործել է սիրողական երգչախումբ, որը կատարել է հատուածներ Տիգրանեանի «Անուշ» օպերայից, Կոմիտասի «Ով Մեծաքանչ», Մայիլեանի «Լորիկ» եւ այլ երգեր: 1938ի Փետրուարի 24ին Վարդանանց տօնի առիթով ներկայացրել են «Վարդանի Մահը» ներկայացումը, որ յետագայում կրկնել են: Թէեւ երիտասարդները բաւականաչափ լաւ չեն տիրապետել հայերէնին, սակայն մեծ խանդավառութեամբ են նուիրուել իրենց գործին: Նոյն թուականի Յունիսի 24ին ՀԵՄը նշել է վիպասան Բաֆֆու ծննդեան 100ամեակը⁷⁶:

1938ին Շանհայի ռուսական եկեղեցում հոգեհանգիստ է մատուցուել Կաթողիկոս Խորէն Ա.ի մահուան առթիւ, ռուս եպիսկոպոսի եւ քահանաների կողմից: Ընտրուել է համայնքի եօթ հոգուց կազմուած վարչական մարմին՝ Հայկ Ասատուրեանի ղեկավարութեամբ: Աղօթատուն կառուցելու նպատակով հանգանակուել է 1500 դոլար (500 դոլարը նուիրաբերել է Ասատուրեանը), որի բացումը վէժ քարով կատարել է չինահայութեան հոգեւոր առաջնորդ Ասողիկ վարդապետը: Վերջինս հովուապետական այց է կատարել Մանչուրիա (որտեղ 57 հայկական պսակ եւ մկրտութիւն է կատարել ռուսական եկեղեցում) եւ Հայլար (35 հայկական պսակ եւ մկրտութիւն է կատարել մի մասնաւոր տանը)⁷⁷:

1939ին Ասողիկ վարդապետի գաղափարով եւ Հայկ Ասատուրեանի, Վահան Չանդալեանի եւ այլոց առատաձեռն օժանդակութեամբ Մոնսիւնիոր Մարեսկա 269 փողոցի երկյարկանի քարաշէն մի տանը պաշտօնապէս բացուել է Շանհայի Հայոց Ազգային Տունը: Նրա նպատակն է եղել նիւթական օգնութիւն մատակարարել ազգակիցներին, դառնալ մշակութային կենտրոն: Կենտրոնում կազմակերպել են հայերէն երեկոյեան դասընթացներ երեխաների համար: Չանդալեանը դասախօսութիւններ է կարդացել հայերէն եւ ռուսերէն լեզուներով: Ունեցել են նաեւ երգչախումբ, որը ղեկավարել է Լեւոն Յովհաննիսեանը: Հայոց Ազգային Տան ամսական ծախսը կազմել է 300 եռան (ներառեալ ուսուցչի ծախսը), որ մասամբ գոյացել է անդամավճարներից, իսկ կէսը տրամադրել է Ասատուրեանը: Ծրագրել են սեփական եկեղեցի ունենալ, որի համար հող գնելու նպատակով հանգանակուել է 12000 եռան (միայն 10000ը տրամադրել է դարձեալ Հայկ Ասատուրեանը)⁷⁸: «Մեր ազգակից Հայկ Ասատուրեանի մասին որքան գրուի՝ քիչ է»,

նչեւ է չինաբնակ Վահագն Թէոդիկը (Վապճինճեան)՝ անուանելով նրան Շանհայի հայոց բարերար արքան⁷⁹ :

1938ին Շանհայում տեղի ունեցած չին-ճապոնական բախումների ժամանակ տեղի հայ երիտասարդները անմասն չեն մնացել քաղաքի սահմանները պաշտպանելու գործից: Այդ բախումների ժամանակ զոհուել է ՀՅՄի անդամ, 22ամեայ Արտաշէս Եսոյեանը: Յետմահու նա արժանացել է Շանհայի Քաղաքապետարանի Խորհրդի մեդալին⁸⁰ :

ՀԱՅԵՐՆ ԱՅԼ ՉԻՆԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Կազմակերպուած կեանքով են ապրել նաեւ Մանջուլիի հայերը, որոնք ունեցել են մանկապարտէզ, նախակրթարանի ծրագրով դպրոց, երիտասարդական միութիւն, որ բացել է գրադարան, կանանց միութիւն, որը Հայաստանի Հանրապետութեան տարիներին մի քանի հարիւր ձեռք աղջիկների տաք հագուստ է պատրաստել եւ ուղարկել Հայաստան⁸¹ : Մանջուլիի հայ համայնքը զգալիօրէն տուժել է 1929ի չին-խորհրդային հակամարտութեան ժամանակ, երբ համայնավարները ուժեղացրել են Մանջուլին: Շատ հայեր ստիպուած տեղափոխուել են Խարբին եւ այլուր:

Չինաստանի հիւսիսում՝ Մոնղոլիայի եւ Ռուսաստանի միջեւ ընկած Հայլար (Խայլար) քաղաքում ապրել է 4-5 հայ ընտանիք եւ 5-6 ամուրի. բոլորն էլ զբաղուել են վաճառականութեամբ: Այս քաղաքում դեռեւս 1915ին գինու եւ նպարեղէնի խանութ է ունեցել Գրիգոր Դ. Կասեանցը (Քոսեան), իսկ Վ. Մ. Խոռխոռուճեանը դեղատոճիկ համարուել է լաւագոյնը քաղաքում: Այս անձին պատկանել է նաեւ Արտածման Ու Ներածման Առեւտրի Տունը: Կ. Մ. Բասկալեանն ունեցել է եւրոպական կօշիկի գործարան եւ վաճառատուն. ծանօթ է եղել նաեւ Ս. Քիրմանեանի հիմնած ընկերութիւնը, որն զբաղուել է գիւղատնտեսութեամբ եւ անասնապահութեամբ⁸² :

Չանչունի հայերի թիւը եղել է մօտ 45, որոնցից ամենաերեւելին եղել է Իւան Աւետիսեանը: Տիենծինում բնակուել են 44 հայեր, գրեթէ բոլորն էլ տաճկահայեր: Այնտեղ գործել է Նիւ Եորքի Գարակէօգեանների գորգագործութեան մասնաճիւղը (յայտնի որպէս The A. and M. Karagheusian Imperial Carpets and Rugs of New York), որտեղ 2000 մարդ է աշխատել: Այս հիմնարկութեան վերատեսուչն է եղել Յակոբ Շահպագը (Շահպագեան), օգնականը՝ Վահագն Թէոդիկը: Յիշուում են նաեւ շապինգարահասարցի Գառնիկ Հիւսիսեանի, պոլսեցի Օգասին (sic) Կոստանդեանի, ռումինահայ Հայկ Մարգարեանի եւ կեսարացի էւրեանեանի անունները⁸³ : Տիենծինում են բնակուել նաեւ առեւտրականներ գիւմրեցի Արսէն Անտոնեանցը, խարբերդցի Նշան Պետրոսեանը եւ թիֆլիսեցի Տէր-Առաքելովը:

Դայրէն քաղաքի 14 հայ ընտանիքների (36 հոգի) ներկայացուցիչներից էին կարնեցի սրճարանատէր Ալեքսան Յարութիւնեանը, նորբայագէտցի Վահան Կրոյեանը, պանտրմացի Արամ Իշխանեանը, գանձակեցի բժիշկ Գարեգին Գէորգեանը, ազգային կեանքի գործիչներ - ծնունդով ախալցխացի - Կարապետ Ասպետեանը (որն իր հարստութիւնը կտակել է հայրենակիցներին) եւ տիկին Երեւակ Իշխանեանը⁸⁴ :

ՈՎ ՈՎ ԷՐ ՉԻՆԱՀԱՅԵՐԻ ՄԷՁ

Ըստ կարելույն թուարկենք Ի. դարի առաջին կեսին Չինաստանում բնակուած մի շարք հայերի անուններ եւ գործունէութեան վերաբերեալ հակիրճ տուեալներ:

Թիֆլիսեցի Յովհաննէս Գրձելեանը (Իւան Գրձելով) եւ իր եղբայրը Չինաստանում են հաստատուել 1897ին: Խարբինում նրանք ունեցել են շաքարեղէնի, հրուշակեղէնի եւ հացատեսակների մեծ գործարան:

Ղարաբաղցի Վաղարշ Ծիծաղեանցը, ծնուած Ազատ գիւղում, 13 տարեկանում՝ 1909ին, մեկնել է Խարբին՝ աշխատելու այնտեղ հաստատուած իր աւագ եղբօր մուշտակեղէնի խանութում: Առաջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ Վաղարշը ծառայել է կովկասեան ճակատում, կռուել էրզրումում: Վերադառնալով Խարբին՝ 1917-1922 որպէս վաճառական ճամփորդել է Խարբինի եւ սիբիրեան քաղաքների (Նովոսիբիրսկ, Չիտա, Վլադիվոստոկ) միջեւ: 1922ին Վլադիվոստոկում հանդիպել է մի ղարաբաղցի աղջկայ եւ ամուսնացել նրա հետ: Հաստատուելով Խարբինում՝ Ծիծաղեանցը առեւտրական գործունէութիւն է սկսել Խարբինի եւ չինական քաղաքների (Դայրէն, Մուկդէն) եւ Պորտ Արթուր նաւահանգստի հետ: 1941ին կնոջ եւ դստեր հետ տեղափոխուել է Շանհայ, իսկ 1952ին հաստատուել Աւստրալիայում⁸⁵:

1919-1922 Չինաստանում եւ Ճապոնիայում է բնակուել յետագայում ամերիկաբնակ երկրաբան, անտառագէտ, ծնունդով թիֆլիսեցի Սուրէն Գէորգեանցը (մահ. 1958): 1932ին որոշ ժամանակ Չինաստանում պաշտօնավարել է եւրոկիացի Լէոն Սարրեանը, որն այդտեղ է բնակուել կնոջ եւ դստեր հետ⁸⁶ (բնակավայրը մեզ յայտնի չէ):

Երեւանցի Սիմոն Էլոյեանը (ծն. 1874ին) հայկական եւ ռուսական կրթութիւն է ստացել ծննդավայրում: Որպէս գործարար այցելել է Ռուսաստանի մի շարք մեծ քաղաքներ: Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ տեղափոխուել է Մանչուրիա, հաստատուել Խարբինում: 1938ին այստեղ ամուսնացել է հայուհի Իգարեյլայի հետ: Խարբինում ունեցել է շոկոլադի գործարան, տնօրինել մի քանի ռեստորան տարբեր քաղաքներում: Մեծ նուիրատուութիւն է կատարել Խարբինի հայկական եկեղեցուն: 1960ին ընտանիքով տեղափոխուել է Աւստրալիա⁸⁷:

Արդէն մի քանի անգամ յիշատակուել է Շանհայում բնակուած խոշոր գործարար եւ ազգային Հայկ Ասատուրեանը (16 Ապրիլ 1901-1987): Նա ծնուել է Եգիպտոսում, փաստաբանի ընտանիքում: Հայրը Նուբար փաշայի ժամանակ ազատ ելումուտ է ունեցել եգիպտական արքունիք եւ շատ յարգուած է եղել եգիպտացիներից: Հայկ Ասատուրեանը եղել է Եգիպտոսի բռնցքամարտի ախոյեան⁸⁸: Հաստատուելով Չինաստանում՝ հիմնել եւ ղեկավարել է պելլոտայի (բասկեան գնդակախաղ, յայտնի՝ խաի ալաի անունով) կենտրոններ Շանհայում, Տիենծիւնում, այնուհետեւ՝ Մանիլայում: Շանհայում նրա տնօրինած «Խաի Ալայի Ֆրոնտոնս» կոչուող վիթխարի մարզադաշտի մուտքն անվճար է եղել⁸⁹: Նրա կինը եղել է եգիպտահայ դերասանուհի Վալենտինա Ամիրայեան/Առնօն (ծն. 1901, Ստամբուլ), լեւան-

տէն հօր եւ հայ մօր զաւակ, որը Գահիրէում մասնակցել է հայերէն թատերախաղերի եւ «Անուշ» օպերայի բեմադրութեանը, էմի Ռայան անունով նկարահանուել է ամերիկեան եւ եգիպտական շարժանկարներում: Հայկ Ասատուրեանը եւ Վալենտինա Ամիրայեանը, ինչպէս նաեւ վերջինիս դուստր Ալիդան՝ առաջին ամուսնութիւնից, երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ երեք տարի արգելափակուած են եղել Մանիլայի ճապոնական համակենտրոնացման ճամբարում, որտեղից Վալենտինան դուրս է եկել քաղցից կիսամեռ վիճակում: Ամերիկացիները նրան քաղաքացիութիւն են առաջարկել, եւ ընտանիքը մեկնել է Լոս Անջելըս, որտեղ էլ Ամիրայեանը յետագայում մահացել է⁹⁰:

Ծնունդով կարնեցի Չանդալեան եղբայրներին (նրանց ազգանունը յիշուում է նաեւ Չախալեան ձեւով) պատկանել է Շանհայի հրուշակեղէնի խանութների մի մասը: Շանհայում Սեդրակ ժամհարեանցը մի պարսիկ ընկերոջ հետ դրամատուն է ունեցել: Կերպասեղէնի վաճառականութեամբ է զբաղուել Հայկ Իփէքճեանը:

1937ին մամուլը գրել է Չինաստանի եւ Հնդկաստանի միջեւ գտնուող Խոթան քաղաքում բնակուած Գարեգին Մոլդովաքի մասին, ծնուած 1864ին: Նա ունեցել է գորգերի գործարան Խոթանում, որտեղ կիրառել է բուրդը բուսական ներկով գունաւորելու արհեստը⁹¹:

1930ականների չինահայերի մէջ, անշուշտ, ազգային եւ հասարակական գործունէութեան առումով առաջնութիւնը պատկանում է ամենահայաշատ համայնքի՝ Խարբինի հայերին: Արդէն մի քանի անգամ յիշուեց Ազգային Վարչութեան նախագահ, բժշկական վերատեսուչ եւ Ոստիկանական Դատարանի պատուակալ անգամ Ստեփաննոս Մղտեսեանը, որը որոշ ժամանակ ղեկավարել է Խարբինի առողջապահական գործը: Ծնունդով Վրաստանի Թեթլա քաղաքից՝ նա բարձրագոյն կրթութիւն ստացել է Մոսկուայի Բժշկական Համալսարանում: Ուսման տարիներին ձեռքակալուել է որպէս յեղափոխական եւ բանտարկուել Թիֆլիսի Մետէխի բանտում: Ազատուելուց յետոյ Մղտեսեանը մեկնել է նախ Դորպատ, ապա՝ Մոսկուա, որտեղ աւարտել է ուսումը: Երբ 1910-1911ին Մանչուրիայում ժանտախտի համաճարակ է բռնկուել, նա ուղարկուել է Չինաստան՝ հիւանդութեան դէմ մաքառելու: Իր յաջող գործունէութեան համար Մղտեսեանը չինական կառավարութեան կողմից պարգեւատրուել է շքանշաններով: 1924ին նշանակուել է Մանչուրիայի Բժշկական Վերատեսուչ: 1927ին սկսել է հրատարակել ռուսերէն Meditsinskaya Gazeta (Բժշկական շաբաթաթերթ) թերթը: 1929ին Խարբինում տեղի հայերը մեծ շուքով նշել են նրա յրբեկեանը, որին ներկայ են գտնուել նաեւ չինացի, անգլիացի, ճապոնացի, լեհ, վրացի, ռուս եւ օս ազգերի ներկայացուցիչներ: Չինական թերթերն ընդարձակ յօդուածներով ներկայացրել են յրբեկեանին⁹²: Ստեփանոս Մղտեսեանը մահացել է 1933ին՝ դիագնոստիկական ժամանակ թունաւորումից⁹³:

Խարբինում 1930ականներին ճաշարանների տէր են եղել Վանօ Յակոբեանը եւ վրացահայ Սեդրակ Փուչինեանը: Մէկ այլ խարբինցի՝ Լէոն Նազա-

րովը (Աեւոն Շահնազարեան), 1940ականներին եղել է ամերիկեան «Ճենրըլ Գորդըն» նաւի գլխաւոր ճարտարագէտը⁹⁴ :

1930ից Չինաստանում է բնակուել Պետերբուրգում ծնուած Ալեքսան Մադաթովը, որտեղ նա յաճախել է Ֆրանսիական Տեխնիկական Քոլէջը: Աշխատել է Շանհայի օմնիբուսների ընկերութիւնում: Եղել է Շանհայի ՀԵՄի գործօն անդամ: 1951ից բնակուել է Աւստրալիայում⁹⁵: Ճակատագիրը Չինաստան է նետել նաեւ ռուսական բանակի երբեմնի սպայ, թիֆլիսեցի Կորգանովին (Ղորղանեան): Նա եղել է Ստալինի ընկերը, որի հետ միասին ժամանակին զբաղուել է բանկի կողոպուտով՝ յանուն համայնավարութեան յաղթանակի⁹⁶ :

Արդէն մի քանի անգամ յիշուած ՀՅԴ գործիչ, ծնունդով կարնեցի Համազասպ Պսակեանը «Կասպ» եւ «Պսակ» ծածկանուններով աշխատակցել է սփիւռքահայ մամուլին՝ ուղարկելով տեղեկութիւններ չինահայ համայնքի մասին: Նա գրել է նաեւ թղթակցութիւններ Չինաստանի քաղաքական կացութեան վերաբերեալ, յատկապէս երբ սրուել են չին-ճապոնական յարաբերութիւնները եւ ճապոնիան գրաւել է Մանչուրիան⁹⁷ :

Պսակեանի աւագ դուստրը՝ Խարբինի Ֆիլհարմոնիկ Նուագախմբի երգչուհի Կարինէ Պսակեանը, ծնուած Մանջուլիում, մանկուց արտասանութիւններով եւ ուսերէն ու հայերէն երգերով մասնակցել է Խարբինի հայ եւ ռուս համայնքների միջոցառումներին: Նա ղեկավարել է հայկական եկեղեցու երգչախումբը, բեմադրել «Արչին Մալ Ալան» օպերէտը եւ «Անուշ» օպերան, որոնք յաջողութիւն են ունեցել Խարբինի բազմազգ տարագիրների շրջանում: Նա ամուսնացած է եղել Խարբինի ռուսական մամուլի լրագրող Ալեքսանդր Պլաւկովի հետ, որը 1945ին խորհրդային զօրքերի կողմից Չինաստանի գրաւման ժամանակ ձերբակալուել է որպէս սպիտակ-գուռադիական եւ աքսորուել՝ մահկանացուն կնքելով Սիբիրում: Նրանց որդին է ամերիկաբնակ երգահան եւ դաշնակահար Վլադիմիր Վուսը (ծն. 1944, Խարբին): Հաստատուելով ԱՄՆում՝ Կարինէ Պսակեան-Վուսը հիմնադրել է Սան Ֆրանսիսքոյի առաջին ռուսական կանանց երգչախումբը, կատարել Արամ Խաչատրեանի, Ռախմանինովի եւ այլոց ստեղծագործութիւններից⁹⁸ : Նա մահացել է 2000 Փետրուարի 26ին⁹⁹ :

Համազասպ Պսակեանի կրտսեր դուստրն էր Արմէնուհի Յոլինէ Պսակեան-Բալեանցը (9 Յունուար 1921, Մանջուլի-2 Օգոստոս 2007, Սան Ֆրանսիսքո): Մանկութիւնն անցել է Խարբինում, ստացել ռուսական կրթութիւն, յաճախել դրամայի եւ բալէտի դասերի, զբաղուել մարմնամարզութեամբ: 1939ին ամուսնացել է Արամ Բալեանցի հետ, որը Մինդաօյում զբաղուել է արտածում-ներածումով: Նրանց դուստրը (յետագայում՝ տիկին Ջենրիթ Էթրրիջ) ծնուել է 1942ին, Մինդաօ քաղաքում, որդին՝ Արթուր Բալեանցը, 1945ին, ճապոնական համակենտրոնացման ճամբարում: Պատերազմից յետոյ Բալեանցները վերադարձել են Մինդաօ, զբաղուել հրուշակագործութեամբ: Հեռանալով Չինաստանից՝ 1950-1951ին նրանք բնակուել են Ֆիլիպիններում, փախստականների ճամբարում, իսկ 1952ին հաստատուել Սան Ֆրանսիսքոյում: Այստեղ Արմէնուհին յայտնի է դարձել որպէս

Արմէն Բալի: Սան Ֆրանսիսքոյում հիմնել է «Բալիզ» հայ-ռուսական ռեստորանը՝ ձեւաւորուած չինական թան գերդաստանի ոճով, որը գործել է մինչեւ 1985¹⁰⁰: Արմէն Բալին եղել է բալետի երկրպագու եւ ողջ կեանքում հոգատարութեամբ է շրջապատել բալետի արուեստագէտներին: Մտերիմ է եղել յատկապէս մեծահասակ Ռուդոլֆ Նուրէեւին: Չինաստանում ապրած իր տարիների մասին Արմէն Բալին պատմել է բեմադրիչ Փիթըր Քաուֆմանի «Չինաստան. Վայրի Արեւելքը» փաստագրական շարժանկարում (1994): Արմէն Բալիի գործը շարունակել է դուստրը՝ Ջենըթը, որի «Տոսկա» սրճարանը եղել է հոլոլուստեան շատ յայտնի գործիչների հաւաքատեղի¹⁰¹:

Գաշնակահարուհի եւ երգչուհի է եղել Ալիս Հիւսիսեանը, դուստրը շապինգարահիսարցի Գառնիկի, որը 1950ին Չինաստանից տեղափոխուել է Սան Ֆրանսիսքո: Նա տիրապետել է հայերէն, չինարէն, ռուսերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներին¹⁰²:

Հետաքրքրական զուգադիպութեամբ Շանհայում են ծնուել հայ-լեհական ծագումով երկու մշակույթի գործիչներ՝ ամերիկեան թատերապարի հռչակաւոր պարուհի, լեհ հօր եւ հայ մօր գաւակ թամարա թումանովան (Խասիդովիչ, 1919-1997) եւ լեհագիր բանաստեղծ, արձակագիր, բեմագրող, ռուս եւ հայ բանաստեղծութեան թարգմանիչ Անջէյ Մանդալեանը (Լեհաստան), որը ծնուել է 1926ին, հայ հօր (1920 Մայիսեան ապստամբութեան մասնակից, գիւմրեցի թաղէոս Մանդալեան) եւ լեհ մօր ընտանիքում:

Յիշենք նաեւ Խարբինում ծնուած Ուսաննա Թաթուլեանին (Օլգա Թաթուլովա), հայ կազակ Ալեքսէյ Թաթուլով-Թաթուլեանի եւ ռուս պարուհի Մարիա (Մարուսիա) Գուրդինի դուստրը: Ուսաննան նախապէս մկրտուել է Խարբինի հայկական եկեղեցում, յետագայում ընդունել ռուս ուղղափառ դաւանանք: Ամուսնալուծուելով Թաթուլովից՝ Մարիա Գուրդինը վերամուսնացել է ուկրաինացի Չախարչենկոյի հետ, որից էլ ծնուել են Սվետլանա եւ Նատալիա քոյրերը: Նրանք յետագայում հաստատուել են Քալիֆորնիա եւ դարձել դերասանուհիներ՝ Լանա եւ Նաթալի Վուդ անուններով: Համաշխարհային հռչակի է տիրացել յատկապէս շարժանկարի աստղ Նաթալի Վուդը, որի կենսագրութիւններում մշտապէս յիշուում է իր կէս հայ համամայր քոյրը՝ Ուսաննա Թաթուլովա-Վիրիպեան¹⁰³:

Մեծ Եղեռնից մազապուրծ տիգրանակերտցի Կարապետ Մելիքեանը (1896-1938) հետիոտն հասել է Արեւելեան Հայաստան, սակայն 1917ին, խուսանաւելով բոլշեւիկներից, փախել է Չինաստան: Նախ հաստատուել է Մանջուլիում, բացել նպարեղէնի խանութ: Այստեղ ծանօթացել է ծնունդով դարաքիլիսցի Մարիամ Ազատեանի (ծն. 1901) հետ: 1931ին տեղափոխուել են Խարբին, որտեղ Կարապետը բացել է մէկ ուրիշ նպարեղէնի խանութ: Նրանց դուստրը՝ Վերգինէն (Վըրջինիա), դեղագործութիւն է ուսանել Պոլիտեխնիկ Ինստիտուտում: Չինական ժողովրդական Հանրապետութեան հռչակումից յետոյ Մելիքեանները տեղափոխուել են նախ Պարագուայ, այնուհետեւ մշտական բնակութիւն են հաստատել ԱՄՆում:

Չինաստանի հայերի վերաբերեալ ուշագրաւ տուեալներ է պարունակում 1996ին ԱՄՆում հրատարակուած *Kavkaz: A Biography of Yervand*

Markarian անգլերէն հատորը: Հեղինակի հայրը՝ Եղեռնից մագապուրծ Յովհաննէս Մարգարեանը, կորցնելով ընտանիքին, գաղթել է նախ Արեւելեան Հայաստան, ապա՝ Սիբիր, այնուհետեւ՝ Խարբին: Այստեղ փորձել է գոյութիւնը պահել պարի դասեր տալով: Խարբինում հանդիպել է ապագայ կնոջը՝ Աննա Շահնազարովային, ունեցել երկու որդի: 1925ին ընտանիքը տեղափոխուել է Տիենծին, որտեղ բացել է «Մոդեռն» փոքրիկ հիւրանոցը: Աննա Շահնազարովան Տիենծինում որոշ ժամանակ ունեցել է «Բալալայկա» ռեստորանը: Յովհաննէս Մարգարեանի որդիներից էդին 1948ին միայնակ ներգաղթել է Հայաստան, սակայն նրա հետքը 1949ից կորել է¹⁰⁴. ամենայն հաւանականութեամբ քարոտուել է Սիբիր: Երկրորդ որդին՝ 1920ին Խարբինում ծնուած Երուանդ Մարգարեանը, պէտք է երկար ուղի անցնէր՝ կատարելով զանազան աշխատանքներ Չինաստանում, այնուհետեւ ծառայելով Փրանսիական լեգէոնում՝ Հնդկաչինում, տնօրինելով սեփական «Կաւկազ» ռուս-հայկական ռեստորանը Տիենծինում, Ռիօ Դէ Ժանէյրոյում, Սան Ֆրանսիսքոյում եւ Լոս Անջելըսում: Երուանդ Մարգարեանը եղել է Շանհայի Հայ Օգնութեան Միութեան ներկայացուցիչ: Ունեցել են երեք զաւակ՝ Միշա (ծն. 1943, Շանհայ), Սամսոն (ծն. 1945, Տիենծին) եւ Վիլյէտ (ծն. Շանհայ) Մարգարեաններ, որոնք բնակւում են Լոս Անջելըսում:

Մարգարեանի աները՝ Մամիկոն Քարտաշեանցը եւ կինը՝ ծնունդով վիրահայ, Իրկուցկում ծնուած Վերա Քարտաշեանը, նոյնպէս զբաղուել են ռեստորանային գործով: Խարբինում տնօրինել են «Սամսոն», իսկ Շանհայում՝ «Կաւկազ» ռեստորանները:

Կղզիացած կեանքով ապրող չինաբնակ հայերը, սակայն, անմասն չեն մնացել չին լեզուին եւ մշակոյթին: Ուսանելով հանդերձ օտար դպրոցներում՝ Չինաստանում կրթութիւն ստացող հայերը տիրապետել են նաեւ չինարէնին (ոմանք նաեւ՝ ճապոներէնին), կարողացել ոչ միայն խօսել, այլեւ կարողալ ու գրել: Չինական հարուստ խոհանոցը մուտք է գործել նաեւ հայկական ընտանիքներ: Չինաստանում ծնուած հայերի համար չինարէնը յաճախ առաջին լեզու է եղել եւ անգամ ազդել մայրենի հայերէնի վրայ¹⁰⁵:

Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ՅԵՏՈՅ

Երկրորդ աշխարհամարտի տարիներին չինաբնակ հայերը յայտնուել են նոր փորձանքի մէջ: Ճապոնական յարձակումների ժամանակ չինահայերը համարուել են Ճապոնիայի թշնամիներ եւ մեկուսացուել են համակենտրոնացման ճամբարներում: Դրա պատճառը հաւանաբար եղել է այն, որ հայերի հայրենիքը գտնուել է Ճապոնիայի թշնամի Խորհրդային Միութեան կազմում: Հայերը եւ ռուսները ճապոնական իշխանութիւնների կարգադրութեամբ թեւերին կրել են «Տ» տառանիշը՝ որպէս անվստահելիներ: Չինաստանում հաստատուած իրանահայերը նոյնպէս համարուել են թշնամիներ եւ նրանց եւս ստիպել են իրենց ձախ թեւին կրել կարմիր երիզ՝ «Ի» տառանշանով¹⁰⁶: Հայերի մի մասը գոհուել է համակենտրոնացման ճամբարներում՝ քաղցից, հիւանդութիւններից եւ ճապոնական խժոժութիւն-

ներից: Այդ ճամբարներից նրանք ազատուել են միայն 1945 Օգոստոսի 19ին: Չինահայերի յետպատերազմեան առաջին հաւաքը տեղի է ունեցել 1946 Մայիսի 26ին, որը ստեղծեց ազգային նոր վարչութիւն¹⁰⁷: Նրանք փորձել են վերականգնել խզուած կապերը տարբեր երկրների հայ համայնքների հետ: 1947ի սկզբին Նիւ Եորքի Հրաբեր թերթը հրատարակել է Չինաստանից Մեժլում անունով մի հեղինակի յօդուածը Չինաստանի ներկայ կեանքի մասին¹⁰⁸:

1946ին էջմիածին ուղարկած նամակներից մէկում Ասողիկ վարդապետը գոհունակութեամբ նշել է, որ առիթներ է ունեցել հանդիպելու խորհրդային գործի հետ Չինաստանում յայտնուած հայաստանցի երիտասարդների, որոնք սրտակից են, հաստատակամ, անկեղծ ազգասէր եւ հաւատքից էլ հեռու չեն¹⁰⁹: Նոյն թուականին Հայաստանի հետ կապ է հաստատել Ա. Ա. Եաղուբեանը Շանհայից, որը պատրաստուել է ելոյթ ունենալ «Խորհրդային Հայաստանի Արուեստը Քսանհինգ Տարում» թեմայով՝ խնդրելով իրեն արամադրել համապատասխան նիւթեր¹¹⁰: Իսկ 1947ին նա վկայել է, որ էջմիածնից ստացած կոնդակները կարդացել է հայերի համար, որոնցից շատերը ցանկութիւն են յայտնել հայրենադարձուել, Ասողիկ վարդապետն էլ նրանց հետ, որի առողջութիւնը քայքայուել էր հոգեկան ցնցումներից եւ երկրի խիստ կլիմայական պայմաններից: Ասողիկ վարդապետի վկայութեամբ՝ պատերազմից առաջ չինահայութեան ընդհանուր թիւը եղել է 600 մարդ, իսկ 1947ի տուեալով՝ 300 (Ճապոնիայի հետ միասին): Շանհայի հայերի վիճակը եղել է համեմատաբար լաւ, Խարբինում մնացել են մօտ 150 հոգի, որոնք գտնուել են տնտեսական դժուարութիւնների մէջ¹¹¹:

Չինահայերն իրենց պատուիրակներն են ունեցել 1947ին Նիւ Եորքում գումարուած Հայերի Համաշխարհային Համաժողովում: 1946 Դեկտեմբերի 8ին կայացած ժողովում Շանհայի հայ համայնքը որոշել է Նիւ Եորք մեկնող պատուիրակութեան կազմը՝ յանձնիս իր մշտական պատուոյ նախագահ Հայկ Ասատուրեանի, Շանհայի Հայ Օգնութեան Միութեան նախագահ Գաբրիէլ Քիլեանի եւ նրա կնոջ ու Վիկտոր Չանդալեանի¹¹²:

Սակայն համակենտրոնացման ճամբարներից դուրս գալուց յետոյ հայերի դէմ հալածանքներ են սկսել չինացի համայնավարները: Ինչպէս վկայել է 1948ին Չանչունից մի հայի գրած նամակը՝ «...ապրեցանք շատ մը սեւ տարիներ, բայց դեռ կատարեալ չէ մեր ազատումը... Վերջին 2-3 տարին տաժանելի էր մեր դրութիւնը. տուիւք եւ զոհեք, կարծես թէ ուր որ տառապանք կայ, հոն հայերը պէտք է տանջուին: Աստուած եթէ օգնէ եւ իրար տեսնենք, կը պատմենք ձեզ չինական վայրագութեանց»¹¹³ մասին: Նոր՝ համայնավար վարչակարգի պայմաններում չինաբնակ հայերը նպատակայարմար են գտել հեռանալ «բամբու վարագոյրի» հտեւից, ուստի եւ շարժում է սկսուել՝ փախստականների միջազգային կազմակերպութիւնների միջոցով հայ բնակիչներին Չինաստանից դուրս բերելու նպատակով¹¹⁴: Մասնաւորապէս Խարբինում հաստատուած օտարազգիները (ռուսներ, լեհեր, գերմանացիներ, Փրանսիացիներ) կամ հայրենադարձուել են, կամ տեղափոխուել ԱՄՆ, Աւստրալիա եւ Հարաւային Ամերիկա, մի փոքր

մասն էլ՝ Եւրոպա: Չինաբնակ օտարերկրացիների համար միեւնոյնն է եղել, թէ ինչ երկիր կը մեկնեն, այնքան որ ունենային քաղաքացիութիւն եւ վերջ տրուէր իրենց անհայրենիքի եւ իրաւագուրկի կարգավիճակին: Յատկանշական է, որ ԱՄՆ գաղթող ծնունդով արեւելահայ չինահայերը հիմնականում նախընտրել են բնակութիւն հաստատել Սան Ֆրանսիսքոյում, որտեղ ռուսական եւ հայկական մեծ համայնք է եղել¹¹⁵: Նախքան տեղափոխութիւնը չինահայերը ժամանակաւորապէս ապաստանել են հարեւան երկրներում՝ Մալայայում, Ֆիլիպիններում, նաեւ Հոնկոնգում: Ֆիլիպիններում տեղակայուած տեղահանուած մարդկանց ճամբարում ապաստանել են մօտ 100 չինաստանցի հայեր, մեծ մասամբ Շանհայից, որոնք պատերազմի ժամանակ կորցրել են իրենց ողջ հարստութիւնը եւ մատնուել թշուառութեան: Նրանք դիմել են պատերազմի պատճառով տարբեր երկրներում գտնուող հայերին օժանդակող ամերիկեան ԱՆՉԱ կազմակերպութեան նախագահ Ջորջ Մարտիկեանին՝ իրենց ԱՄՆ տեղափոխելու խնդրանքով: Այդ նպատակով Մարտիկեանը եւ իր տիկինը բանակցել են Ֆիլիպինների կառավարութեան, մասնաւորապէս ազգային ժողովի նախագահ զօրավար Կարլոս Ռոմուլոյի հետ¹¹⁶: Հոնկոնգում ապաստանել են հայեր Խայլարից եւ Խարբինից. նրանցից ոմանք կաթոլիկութիւն են ընդունել՝ Աւստրալիա մեկնելու նպատակով¹¹⁷:

Յատկանշական է, որ չինաբնակ հայերի մի մասն անձնագիր չունենալու պատճառով է մեկնել Բրազիլ, քանի որ վերջինս այն փոքրաթիւ երկրներից էր, որ ընդունել է անձնագիր չունեցող փախստականներին: Եւ ինչպէս ժամանակին հայերը Կովկասից եւ Ռուսաստանից Չինաստան են հասել ամիսներ, երբեմն մէկ տարի տեւած ճամփորդութիւնից յետոյ, այնպէս էլ հիմա նրանց մի մասի եւ իրենց զաւակների համար երկար ամիսներ են պահանջուել՝ Բրազիլ հասնելու համար, քանի որ այդ ժամանակում Չինաստանից Հարաւային Ամերիկա ուղիղ կապ չի եղել: Երուանդ Մարգարեանը գրել է, որ Չինաստանից Բրազիլ իրենց ճանապարհն անցել է Հոնկոնգ-Թայվան-Հնդկաստան-Իսրայէլ-Չուիցերիա-Իտալիա-Սենեգալ երթուղիով¹¹⁸:

1948 Յունիսի 12ին ՀԲԸՄ Բուենոս Այրէսի մասնաճիւղը ՀԲԸՄի Շանհայի մասնաճիւղից նամակ է ստացել՝ 60 հայերի՝ Արգենտինա մուտքի համար Արտաքին Գործերի Նախարարութեան մօտ միջամտելու նպատակով: Պատասխան է տրուել, որ նամակը յղուել է ՀԲԸՄի Նիւ Եորքի կենտրոնը եւ պիտի սպասեն պատասխանի, քանի որ նման քայլ մասնաճիւղի իրաւասութիւնից վեր է¹¹⁹:

Եղել են նաեւ Չինաստանից Խորհրդային Հայաստան որոշ հայ ընտանիքների հայրենադարձութեան դէպքեր:

Դեռեւս 1936ին ընտանիքով Հայաստան է ներգաղթել բժիշկ Սեդրակ Պետրոսի Մաքսուդեանը (1888-1937): Նա ծնունդով եղել է Խիզանի Խարխոտ գիւղից: Առաջին Աշխարհամարտի տարիներին, խուսափելով օսմանեան բանակում ծառայելուց, հեռացել է լեռները, տեղահանութեան ժամանակ մի ջոկատով պաշտպանել է գաղթականների: Ընտանիքով եւ գերզաս-

տանի անդամների հետ տեղափոխուել է Մանչուրիայի Մանչուոգո քաղաքը, որտեղ արդէն բնակուելիս է եղել եղբայրը՝ Տիգրան Սարկիսովը: Այս քաղաքում էլ ծնուել են Սեդրակ Մաքսուդեանի չորս զաւակները: Մանչուրիայում Սեդրակ եւ Տիգրան եղբայրները բացել են ուստորան: Սեդրակը նաեւ ուսումնասիրել է տիբէթեան բժշկութիւն: Հաւաքել է Մանչուոգոյում բնակուող հայ երեխաներին եւ հայերէն է սովորեցրել: Հայրենադարձութիւնը յետոյ Հայաստանի տարածքում Մաքսուդեանը սկսել է հաւաքել դեղաբոյսեր, տեղացիներին բժշկել տիբէթեան մեթոդներով: Շուտով Երեւանում եւ նրա սահմաններից դուրս տարածուել է չինաստանցի բժիշկի համբաւը: Սակայն Մաքսուդեանը 1937ին ձերբակալուել է ճապոնական լրտես լինելու մեղադրանքով եւ գնդակահարուել¹²⁰:

Սկսած 1946ից Շանհայից որոշ հայ ընտանիքներ ներգաղթել են Հայաստան: 1947ին Չինաստանից Հայաստան է տեղափոխուել Հայկ Գրիգորի Շահնազարեանը (ծն. 1907)¹²¹: 1948ին Չինաստանից Հայրենադարձուել է 16 հայ¹²²: Նրանց մէջ են եղել Եղիշէ քահանայի որդին՝ Հրաչեան (ծն. 1903), կնոջ՝ Ովսաննա Մամիկոնի Ռոստոմեանի (ծն. 1912) եւ Չինաստանում ծնուած զաւակների՝ Աստուածատուրի (ծն. 1930) եւ Մարգարիտի (ծն. 1932) հետ¹²³: Հայաստան է վերադարձել նաեւ Տիենծինում բնակուած, արդէն յիշուած Արսէն Անտոնեանցի որդին՝ Սեդրակ (Սերգէյ) Անտոնեանցը, նրա տոււինուհի կինը եւ իրենց միակ դուստրը՝ Տիենծինում ծնուած Սուսաննա Անտոնեանցը (մեռ. 1990ականներին, Երեւան): Հայրենադարձութիւնը յետոյ Սեդրակ Անտոնեանցին աքսորել են Սիբիր՝ ճապոնական լրտեսութեան մեղադրանքով: վերջինս բարձրագոյն կրթութիւնն ստացել էր Ճապոնիայում¹²⁴:

1953ին Հայրենադարձուել են վերոյիշեալ Սեդրակ Մաքսուդեանի հանդուցեալ եղբոր՝ Տիգրան Սարկիսովի կինը եւ զաւակները: Որդին՝ նոյնպէս Տիգրան Սարկիսով, հաստատուել է Ալավերդիում, իսկ դուստրը՝ Թագուհի (Տատիանա) Նովիկովան, որն ամուսնացած է եղել կէս ուսուկէս ճապոնացի Նովիկովի հետ, դստեր՝ Սվետլանա Նովիկովայի հետ բնակուել է Երեւանում: Նոյն թուականին Չինաստանից ներգաղթել են նաեւ ծնունդով իրզանցի Տէր-Աւետիքեանները (Աւետիքով) Մանչուրիայում ծնուած Թամար Ազատեանցի եւ Մանիա Շախանեանցի հետ, ծնունդով թիֆլիսեցի Յուրինովները (Մուրինեան), որոնք յետագայում հաստատուել են Մոսկուայում, Գրիգոր եւ Ալեքսանդրա Մաճկալովները՝ չորս դուստրերի հետ, Պօղոս եւ Հռիփսիկ Պօղոսովները որդու՝ Սուրէնի եւ երկու դուստրերի (Մարգօ, °) հետ: Ի դէպ, Հռիփսիկ Պօղոսովայի քոյրը՝ Շուշանիկը, Մանչուրիայից հարս է գնացել Ռուսաստանի Չիտա քաղաք՝ ամուսնանալով իրանահայտակ Նալբանդեանի հետ: Յետագայում որդու հետ տեղափոխուել է Իրան, ապա ներգաղթել Հայաստան: Նրա որդին է Հայաստանում ճանաչուած բանասէր-արեւելագէտ Գէորգի Նալբանդեանը, ծնուած 1926ին, Չիտայում¹²⁵:

Աւելի ուշ, 1964 Փետրուարի 12ին Չինաստանից Հայաստան մշտական բնակութեան է եկել հայ-ուսու-գերմանական ծագումով մի ընտանիք. Դան-

դուրեան քոյրերը՝ Թամարան (ծն. 1917) եւ Նինան (ծն. 1924), վերջինիս ամուսին Օլէգ Լէոնիդի Պտիցինը (ծն. 1930), նրանց դուստր Նինան եւ Օլէգի մայր Մարի Միլէրը (ծն. 1894)։ Նրանք բնակուել են Գիւմրիում, եղել ուսուցիչներ¹²⁶։

1951ի տուեալով՝ Չինաստանում դեռեւս ապրել է մօտ 125 հայ ընտանիք (Սարբին, Շանհայ, Սայլար, Տիենծին քաղաքներում)։ Բոլորի անտեսական վիճակը եղել է անբաւարար, զբաղուել են մանր առեւտրով, նրանց մէջ եղել են բժիշկներ, երկրաչափներ եւ փաստաբաններ։ Սարբինահայերը բժախնդրօրէն նշել են եկեղեցական տօները, ապրել համերաշխ՝ մէկ ընտանիքի պէս, խառնամուսնութիւններ չեն եղել՝ չհաշուած ուսանողի հետ մի քանի ամուսնութիւն¹²⁷։ Մինչեւ 1950ականների կէսերը շարունակել է գործել եւ չինահայերի կեանքը դեկավարել «Հայ Հոգաբարձութեան Մարմին»ը։ 1954ի տուեալով Շանհայում տակաւին մնացել է 15 հայ ընտանիք, մեծ մասամբ վաճառականներ եւ որոշակի դիրք ունեցողներ։ Դպրոց չեն ունեցել, հոգեւոր կարիքները համար գործածել են ուսուցիչական եկեղեցին։ Շանհայահայերի մէջ դարձեալ յիշուում են Մամիկոն Քարտաշեանը, որին պատկանել է քաղաքի լաւագոյն ուստորանը, նոյն Չանդալեան եղբայրները, որոնք շարունակել են զբաղուել ամբողջ քաղաքի օտարազգիների հացի եւ հրուշակեղէնի մատակարարման գործով եւ պատրաստել քաղաքի լաւագոյն անուշեղէնը¹²⁸։

Սարբինահայութիւնը, որի թիւը կտրուկ պակասել էր պատերազմից յետոյ, Ասողիկ վարդապետի մեկնելով դարձեալ մնացել է առանց հոգեւոր հովիւի։ 1957 Օգոստոսին Սարբինի հայերը ժողով են գումարել 22 հոգով։ Նկատի ունենալով, որ տարիներ շարունակ Սարբինի հայ եկեղեցին չի ունեցել մնայուն կամ ժամանակաւոր հովիւ եւ որ համայնքի մեծամասնութիւնն արտագաղթել է տարբեր երկրներ, ոմանք առաջարկել են Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու շէնքը վաճառել եւ գումարը կիսել միմեանց միջեւ։ Սակայն չինական իշխանութիւնները յայտարարել են, որ օրէնքով չեն կարող շէնքը վաճառել, քանի որ ժամանակին պետութիւնը հայերին անվճար է տրամադրել հողատարածքը։ 1959ին հայկական եկեղեցու շէնքն անցել է չինական կառավարութեան ձեռքը, որն այն դարձրել է հիւսուածեղէնի գործարան։ 1966 Օգոստոսին, Չինաստանի Ժողովրդային Հանրապետութեան մշակութային յեղափոխութեան տարիներին, երբ Սարբինի բոլոր եկեղեցիները քանդուել են, նոյն ճակատագրին են արժանացել նաեւ հայկական եկեղեցին եւ յարակից շինութիւնները։ Հայկական եկեղեցու գանձերը (սրբապատկերներ, հագուստներ), որ մի քանի տարի պահուել են խորանում, դուրս են բերել բակ եւ այրել¹²⁹։ Սրամատներ փորելու նպատակով քանդուել է նաեւ հայկական գերեզմանատունը։

1958ին Մայրագոյն Արեւելքի երկրներ, նաեւ Չինաստան է այցելել յայտնի հոգեւորական գործիչ Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեանը եւ իր ընդարձակ թղթակցութիւններն ուղարկել Գահիրէի Արեւ օրաթերթին՝ անդրադառնալով Չինաստանի հայերի անցեալին եւ ներկային¹³⁰։ Նա մասնաւորապէս նշել է, որ իր այցելած ժամանակաշրջանում Շանհայում այլեւս

Հայեր չեն մնացել, իսկ խորհրդի հայերի մէջ նշել է հետեւեալ անունները՝ Թադէոս Տէր-Յակոբեան, Աւագ եւ Երմոնիա Թումուրազեանցներ (պիտի լինի Թէյմուրազեանց), Միքայէլ եւ Ջարդար Պողոսեաններ, Ջաքար Աւետիսեանց եւ իր ուսուցիչը, Հմայեակ Էլիասեան եւ իր ուսուցիչը, Մարիամ Յարութիւնեան եւ զաւակները՝ Լեւոն եւ Լէոնիա, Սիմոն Էլոյեան եւ կինը՝ Իգարեյլա եւ իրենց մայրը, Գարեգին Ատենեանց եւ իր ուսուցիչը, Եւգինէ Շահնազարեանը եւ եղբայրը՝ Սուրէն, Վարդան Նազարեան, Վահան Սողոմոնեան եւ իր ուսուցիչը, Սմբատ Բէկ Աւշարեան եւ իր երկու զաւակները եւ եղբայրը՝ Սվիատոսլաւ, Արշալիր եւ Գայիանէ Նշկարեաններ եւ իրենց դուստրը՝ Շուշանիկ (ամուսնացած ուսուցիչ հետ, ունեցել է մէկ որդի), Գարեգին Սարգսեան եւ իր ուսուցիչը: Խայրում բնակուել են Գրիգոր Կասեանցը, կինը՝ Մարիամը եւ զաւակները՝ Լեւոնը, Տիմոթէոսը, Գէորգը եւ Եպրաքսին: Լեւոնն ամուսնացած է եղել Վարդանուշ անունով հայուհու հետ, ունեցել մէկ դուստր՝ Նունէ: Դայրէնում բնակուել է ընդամէնը մէկ հայ՝ Ալեքսան Յարութիւնեանը: Հոնկոնգում Դերենիկ եպիսկոպոսին յայտնել են, որ խորհրդում վիճակն այլեւս անտանելի է դարձել, եւ բոլորն էլ առիթի դէպքում կը հեռանան Չինաստանից¹³¹:

Այդպէս էլ եղել է: 1960ականների սկզբին Չինաստանում գրեթէ այլեւս հայ չի մնացել: Հաստատուելով տարբեր երկրներ՝ նախկին չինահայերը, սակայն, կապը չեն կտրել չինական իրականութեան հետ: Բնաւոր վկայութիւն ենք ստացել թէ տարիներ շարունակ Դամասկոսի միակ չինական ուստորանը պատկանել է երկար ժամանակ Չինաստանում բնակուած հայ ամուսինների, որոնք տիրապետել են նաեւ չինարէնին:

Ամփոփելով նշենք, որ Ի. դարի չինահայ գաղթավայրը կարելի է համարել մի իւրատեսակ կղզի սփիւռքահայ գաղթօջախների պատմութեան մէջ: Ի տարբերութիւն Սփիւռքի մեծ մասի, որն անմիջականօրէն Մեծ Եղեռնի ծնունդ էր, չինահայ համայնքը, կազմուած լինելով մեծամասնութեամբ արեւելահայ գաղթականներից (անխտիր հակահամայնավար դիրքորոշում ունեցող), Հոկտեմբերեան Յեղափոխութեան արդիւնք էր, քանի որ այդ հայերը փախել են “կարմիր անարեւելացիներից” (թէեւ Չինաստանի հայ բնակիչների մէջ կային նաեւ որոշ թուով Եղեռնից փրկուած արեւմտահայեր): Այդ առումով Ի. դարի չինահայ համայնքներն իրենց ձեւաւորմամբ եւ անցած ուղիով աւելի շատ նմանութիւններ ունեն Չինաստանի ուսուցիչական գաղթավայրի, քան որեւէ սփիւռքահայ գաղթօջախի հետ: Նրանց սերունդները, թէեւ որոշակի հայկական ինքնութեամբ, սակայն արդէն որոշ չափով ուժացած, աւելի շուտ պատկանում են այն խմբին, որը պատմաբան Վարդան Գրիգորեանը բնորոշել է որպէս «*ռուսախօս հայերի*» մարզինալ մի սերունդ¹³²:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Պարգեւ Մարտիրոսեան, «Չինաստան», Հայ Սփիւռք Հանրագիտարան, Երեւան, Հայկական Հանրագիտարան Հրատ., 2003, էջ 438:

- ² Ի. դարում չինահայերի պատմության առաջին ընդգրկուն պատկերը տուել է պատմաբան Ռաֆայել Աբրահամյանը (տե՛ս՝ Հայ Գաղթաշխարհի Պատմություն (Միջնադարից Մինչև 1920 թ.), Հտր. 2, Երևան, «Գիտություն», 2003, էջ 423-438:
- ³ Արդէն 1908ին Իրկուցիում եղել է հայկական եկեղեցի՝ երկու քահանայով, որոնք գործել են սիրելիքներ տարբեր քաղաքներում եւ Սախալին կղզում: Տեղի հայերը ստացել են հայերէն մամուլ եւ գրականութիւն (տե՛ս՝ George Ter Avetkiantz (Shooshtzy), “On the Siberian (sic) Railway,” *The Armenian*, Calcutta, 9.12.1908, էջ 20-21):
- ⁴ Էմմա Կոստանդեան, *Միջուկը Խորիմեան. Հասարակական-Քաղաքական Գործունէութիւնը*, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, 2008, էջ 422:
- ⁵ Կ. Հունտցեան, «Նամակ Ծայրագոյն Արեւելքից», *Նոր-Դար*, 7 եւ 12.03.1902:
- ⁶ Հրաչեայ Աճառեան, *Հայ Գաղթականութեան Պատմութիւն*, Երևան, «Ձանգակ-97», 2002, էջ 325:
- ⁷ Ա. Փիրումեանց, «Նամակ Խարբինից», *Մշակ*, 28.01.1905:
- ⁸ Նոյն:
- ⁹ Խ. Թաթուրեան, Յ. Քաչուրեան, Ռ. Լեւոնեան, «Նամակ Խմբագրութեան», *Մշակ*, 28.07.1905:
- ¹⁰ Տե՛ս՝ «Հայ Գերիները Սիրիոյում (Նամակ Խմբագրութեանը)», *Հորիզոն*, 21.03.1918:
- ¹¹ Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ՊՖոնդ 200, ցուցակ 1, գործ 610:
- ¹² Տե՛ս՝ Nadia H. Wright, *Respected Citizens: The History of Armenians in Singapore and Malaysia*, Melbourne, 2003, էջ 77: «Հայոց Ցեղասպանութիւնը Եւ Չինաստանը» թեման հետաքրքրական անակնկալներ է պարզում: 1922ին Պեկինում կայացած Աշխարհի Ուսանողների Քրիստոնէական Դաշնակցութեան Համաժողովում հնչել է հայերի կոտորածների դատապարտման հարցը: Փոքր Ասիան ներկայացրել է Չինաստանի Ամերիկեան Քոլէջի պատմութեան եւ ընկերաբանութեան պրոֆեսոր Ռաֆ Հարրոն: Ապրիլ 2ին, համաժողովը որոշում է կայացրել ի նպաստ Մերձաւոր Արեւելքի հարածուած ժողովուրդների, այդ թւում՝ հայերի, ստորագրուած 32 ազգերի ներկայացուցիչների կողմից («Արեւելքի Չարդերու Մասին», *Ճակատամարտ*, 6.02.1922): 2010ին Համացանցում գետեղուած, *Armenian Weekly* շաբաթաթերթից առանց յղման արտատպուած մի յօդուած վկայում է, որ Եղեռնից փրկուած հայերի նպաստամատոյց խմբեր են ստեղծուել նաեւ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Չինաստանը եւ Կորեան: Չնայած 1921ի Չինաստանի սովին, Պեկինում, Գուանջոյում եւ Շանհայում 1922ին հիմնուել են հայերին նպաստամատոյց յանձնախմբեր: Չինաստանում ճանաչուած ամերիկացի միսիոնէր վերապատուելի էլուուղ Ջ. Թաքսթրին դարձել է կենտրոնական յանձնախմբի նախագահ, որը գործել է Շանհայում: Դրանից առաջ ամերիկեան Ինդիանայոյի քաղաքում միացեալ միջոցառում է կազմակերպուել Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյց Յանձնախմբի եւ Չինաստանի Սովի Հիմնադրամի կողմից: Տիկին Աննա Ազգապետեանը ելոյթ է ունեցել եղեռնից փրկուած գաղթական հայերի կարիքների մասին: Նրա ելոյթից խորապէս ազդուած ԱՄՆում չինական առաքելութեան ղեկավար Սաօ-Քէ Ալֆրէդ Մէն նկատելի գումար է արամադրել հայ գաղթականներին (տե՛ս՝ Cuba, China, Korea, Hawaii and the Armenian Genocide, <http://www.armenianweekly.com>):
- ¹³ Virginia Meltickian, “Pictorial History of the Armenians in China, 1919-1945”, *Hye Sharzhoom*, December, 2003:
- ¹⁴ Այս համագումարի մասին տե՛ս՝ Գեղամ Պետրոսեան, *Հայաստանի Հանրապետութեան Յարաբերութիւնները Սիրիոյի Եւ Հեռաւոր Արեւելքի Ոչ Խորհրդային Պետական Կազմաւորումների Հետ (1919-1920 թթ)*, Երևան, Երևանի Համալսարանի Հրատ., 2006, էջ 229-230:

- ¹⁵ Վլադիմիրովնոստոկի Հայկական Կոմիտեն հիմնուել է 1916ին եւ պաշտօնապէս ճանաչուել Կոլչակի կառավարութեան կողմից: Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի տարիներին այն Հայկական հիւպատոսարանի դեր է կատարել՝ հայերին տարով հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն վկայականներ, ստորագրուած եւ կնքուած Կոմիտէի վարչութեան կողմից (կնիքի վրայ՝ Ռուբինեան Թագաւորութեան զինանշանը՝ առիւծներ եւ Մասիս), որը Ճապոնիայի, Չինաստանի, Սէյլանի, Եգիպտոսի, Կոստանդնուպոլսի, Բաթումի եւ Թիֆլիսի կառավարութիւնների կողմից ճանաչուել է որպէս Հայկական անձնագիր: 1920ի դրութեամբ Վլադիմիրովնոստոկում եղել են 500ի չափ հայեր, որոնց մեծ մասն անցել է Ճապոնիա՝ այնտեղից ԱՄՆ արտագաղթելու նպատակով («Կեանքը Հեռու Վլադիմիրովնոստոկում», *Յառաջ*, 18-07-1920):
- ¹⁶ Համազասպ Պսակեան, «Հանդիպումներ Եւ Պատահարներ», *Հայրենիք*, 1963, թիւ 1, էջ 77-78:
- ¹⁷ «Հայաստանի Ներկայացուցիչը Սիբիրում», *Յառաջ*, 31-08-1920:
- ¹⁸ «Կեանքը Հեռու Վլադիմիրովնոստոկում»:
- ¹⁹ Պետրոսեան, *Հայաստանի Հանրապետութեան Յարաբերութիւնները...*, էջ 231:
- ²⁰ «Հայկ. Հանր. Ներկայացուցիչը Սիպերիոյ Եւ Մայր. Արեւելքի մէջ», *Ճակատամարտ*, 6-07-1920:
- ²¹ Պետրոսեան, *Հայաստանի Հանրապետութեան Յարաբերութիւնները...*, էջ 233:
- ²² ՀԱԱ, ՊՖոնդ 409, ց. 1, գործ 3712:
- ²³ Նոյն, գործ 4712, վաւերագիր 13:
- ²⁴ «Հայերը Չինաստանի Մէջ», *Պայքար*, 15-11-1923:
- ²⁵ Այս մասին մանրամասն տե՛ս մեր՝ “Armyanskaya Tserkovnaya Jizn’ Kharbina” (Խարբինի հայ եկեղեցական կեանքը) յոդուածում, *Պատմաբանասիրական Հանդէս*, 2009, թ. 1, էջ 147-156:
- ²⁶ ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4736, թիւ 1:
- ²⁷ Մկրտիչ Շարոյեան, «Փախստականի Մը Պատմածները. Երեւանէն Խարպին (Չինաստան)», *Յառաջ*, 16-01-1931:
- ²⁸ Մկրտիչ Յակոբեան, «Կարսէն... Չինաստան (Երիտասարդի Մը Ողիսականը)», *Յառաջ*, 14-04-1933: Նման մի վկայութիւն կատարել է ամերիկահայ Ջոան Սարվէլը (Փուչիկեան), որի հօրեղբայր Վարդան Փուչիկեանը եւ մօրեղբայր Յովակիմ Մելքոնեանը Խարբերդից քայլել են մինչեւ Սիբիր եւ Չինաստան, այնտեղից էլ Յովհաննիսյանի (Ճապոնիա) ճանապարհով տեղափոխուել ԱՄՆ (<http://genforum.genealogy.com/armenia/messages/339.html>):
- ²⁹ Kavkaz: A Biography of Yervand Markarian, 1996, printed in the USA, էջ 66-67:
- ³⁰ «Չինաստանի Խարբին Քաղաքից Խնդրում Են», *Յառաջ*, 9-10-1920:
- ³¹ Ծայրագոյն Արեւելքում հայ աքսորականներ յայտնուել են տակաւին 1880ականներին: Այսպէս, 1888ին ալլախոհութեան մեղադրանքով Սախալին կղզի է աքսորուել երեւանցի 18ամեայ Ստեփան Ստեփանեանը (Բալախան), որի՝ կղզում կատարած մի շարք լուսանկարները յետագայում այբոմով հրատարակուել են Մոսկուայում: 1892ին Սիբիր եւ Սախալին է աքսորուել յետագայում իրանական յեղափոխական շարժման գործիչ Եփրեմ Խան Դաւթեանը (1868-1912): Այս երկու անձնաւորութիւններին 1896ին յաջողուել է փախչել Սախալինից: 1890ին Սախալին է աքսորուել նաեւ հայ ազատագրական շարժման գործիչ Սարգիս Կուկունեանը (1866-1914), որը կղզում մնացել է մինչեւ 1905: Ցետագայում նա գրել է *Վերջին Օրերս Սախալինում* յուշագրութիւնը (Բաքու, 1910): Կուկունեանի հետ աքսորուել է նաեւ Թիֆլիսեցի Ռուբէն Ազանեզովը (Յովհաննիսեան), որը մեծ եռանդ է ցոյց տուել 1905-1906՝ արեւմտահայերին օգնութիւն կազմակերպելու գործում: Նա մահացել է 1916ին, Մանչուրիայում (“N. N. R. I. Aganezov”, *Armyanski Vestnik*, 1916, no 42, էջ 21):
- ³² Համազասպ Պսակեան, «Հանդիպումներ Եւ Պատահարներ», թիւ 1, էջ 78-79:

- ³³ ՀԱԱ, ՊՖՈՆԴ 409, ցուցակ 1, գործ 4714:
- ³⁴ Նոյն, գործ 4712, թիվ 12:
- ³⁵ «Զինաստան. Հայ Գաղութը», Հայրենիք, 1.09.1928:
- ³⁶ Ե. Ք. Ռոստոմեանց, «Հայերը Չինաստանի Եւ Մանչուրիայի Մէջ», Հայրենիք, 16.12.1930. նաեւ՝ «Հայերը Մանչուրիոյ Մէջ», Յառաջ, 6.02.1931:
- ³⁷ «Մանչուրիոյ Հայ Գաղութը», Հայրենիք, 7.05.1932:
- ³⁸ ՀԱԱ, ՊՖՈՆԴ 409, ցուցակ 1, գործ 4732:
- ³⁹ «Մանչուրիոյ Հայերը», Հայրենիք, 13.08.1937:
- ⁴⁰ Թորոս Թորանեանը յիշել է, թէ ինչպէս է Նիւ Եորքում հանդիպել իարբինում ծնուած մի հայի: Վերջինիս գիւմրեցի հայրը, ամուսնացած լինելով իր համաքաղաքացի աղջկայ հետ, մեկնել է Մանչուրիա: Տարիներ անց կինը մահացել է, եւ ամուսինը վերադարձել Գիւմրի, վերամուսնացել մի գիւմրեցի աղջկայ հետ եւ նորից հաստատուել իարբինում: Այդ ամուսնու թիւնից էլ ծնուել է վերոյիշեալ նիւեորքցի (Թորոս Թորանեան, Ուղեորութիւն Դէպի Թալլանտ Ու Չինաստան, Հայկ. Ծ. «Կիլիկիա», 2004, էջ 38):
- ⁴¹ «Զինաստան. Հայ Գաղութը», Հայրենիք, 1.09.1928:
- ⁴² իարբինում բնակուած տարբեր ազգերի համայնքների մասին գրականութեան մէջ յիշուած են նաեւ հայերը (տես, օրինակ՝ Thomas Lahusen, *Harbin and Manchuria: Place, Space, and Identity*, Duke University Press, 2000. յղումն ըստ՝ http://en.wikipedia.org/wiki/Armenians_in_China):
- ⁴³ 1918-1922՝ ռուսների թիւը Մոնղոլիայում, հիւսիսային Չինաստանում (ներկայիս ՉժՆի Մինիանի Ուլղուրական Ինքնավար Տարածքում, Ալթայում եւ Տաչէնի շրջանում) հասել է 200000ի, որոնք աստիճանաբար ցրուել են տարբեր երկրներ: Մինչեւ Բ. Համաշխարհային Պատերազմը Չինաստանում ռուսների թիւը եղել է 15000 (նրանց մէջ՝ այլ ազգութիւններ եւս): 1957ին Չինաստանում բնակուել է 9000 ռուս, 1978ին նրանց թիւը հասել է 600ի, 1982ին՝ 2935ի, յետագայում նրանց թիւը դարձեալ աւելացել է: 1990ին Չինաստանում եղել է 13504 ռուսազգի բնակիչ (Henry G. Schwartz, *The Minorities of Northern China: A Survey*, 1984, էջ 294):
- ⁴⁴ Kavkaz..., էջ 7:
- ⁴⁵ Որոտ, «Հայերը Չինաստանի Մէջ», Հայրենիք, 25.04.1926:
- ⁴⁶ Գողթնեցի, «Նարայինի Հայ Գաղութը...»:
- ⁴⁷ Եղիշէ քահանան մի առիթով ասել է. «Յայտնի է, որ ունինք Հայաստան, բայց ոչ հայկական կեանքով: Մեր դժբախտ հայրենիքին մէջ կատարուած անմիտ եւ ազգավնաս գործերու պատճառով վիատելու չենք: Մենք պարտաւոր ենք գաղթականներու մէջ իբրեւ մէկ սիրտ եւ մէկ հոգի պատրաստել մօտիկ ապագային Հայաստանի մէջ հայ կեանքով մտնելու» («Վարդանանց Տօնը իարբինի Մէջ», Հայրենիք, 13.04.1930):
- ⁴⁸ Օննիկ Փանիկեան, *Հոլաւաբանութիւն*, Երեւան, Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի Հրատ., 2006, էջ 138: Փանիկեանը վկայակոչել է Չինաստան այցելած Քեմանչիստ Ռուբէնին եւ վկայել, որ այդ ուխտը գործել է Պեկինում: Սա թիւերի մացուցութիւն է թուում, հաւանաբար պէտք է լինի իարբին, քանի որ այդ ժամանակ Պեկինում հայեր չեն բնակուել:
- ⁴⁹ Համազասպ Պսակեան, «Հանդիպումներ Եւ Պատահարներ», թիւ 2, էջ 45:
- ⁵⁰ «Գաղութահայ Կեանք», Նոր Արշալոյս, 25.02.1926. նաեւ՝ «Հայ Ուքրաինական Միութիւն Մը», Հայրենիք, 21.03.1926:
- ⁵¹ «Զինաստան. Հայկական Դպրոցը», Հայրենիք, 2.02.1927. նոյնը նաեւ՝ «Հայկական Դպրոց Չինաստանի Մէջ», Պայքար, 13.03.1927:
- ⁵² «Հարբինի Հայ Դպրոցը», Հայրենիք, 13.07.1928:

- ⁵³ Այցելու, «Հայերը Չինաստանի Մէջ», *Հայրենիք*, 13.03.1927. նոյնը նաեւ՝ «Գաղութահայ Կեանք», *Հայրենիք*, 1927, թ. 6, էջ 156:
- ⁵⁴ «Խարբերի Հայ Գաղութը», *Հայրենիք*, 31.07.1927:
- ⁵⁵ «Անկախութեան 10ամեակը», *Հայրենիք*, 11.07.1928:
- ⁵⁶ Կասպ, «Մայիս 28ը Խարբերի Մէջ», *Յառաջ*, 24.06.1933:
- ⁵⁷ «Վարդանանց Տօնը Հարբերի Մէջ», *Հայրենիք*, 22.04.1928:
- ⁵⁸ «Վարդանանց Տօնը Խարբերի Մէջ», *Հայրենիք*, 13.04.1930:
- ⁵⁹ «Խարբերի Հայ Գաղութը Տօնած է Դուրեան Պատրիարքի Յորեկանը», *Հայրենիք*, 20.12.1929:
- ⁶⁰ «Խարբերի Հայ Գաղութի Կեանքը», *Հայրենիք*, 17.05.1930:
- ⁶¹ Ե. Բ. Ռոստոմեանց, «Հայերը Չինաստանի Եւ Մանջուրիայի Մէջ»:
- ⁶² Համազասպ Պսակեան, «Հանդիպումներ Եւ Պատահարներ», թ. 2, էջ 46-47. նաեւ՝ Կասպ, «Յովհ. Խան Մասեհեանի Թաղումը», *Յառաջ*, 18.02.1932. նաեւ՝ Կասպ, «Մասեհեան Խանի Մարմինը Թեհրան Փոխադրուեց», *Յառաջ*, 18.03.1932:
- ⁶³ Համազասպ Պսակեան, «Հանդիպումներ Եւ Պատահարներ», թիւ 2, էջ 40:
- ⁶⁴ Բախտար Յովակիմեան, «Պեպօն Չինաստանում», *Հայք*, 8.05.1996:
- ⁶⁵ Meltickian, "Pictorial History...":
- ⁶⁶ «Խոստմանից Օրիորդի Մը Մահը», *Հայրենիք*, 12.11.1927:
- ⁶⁷ Գողթնեցի, «Համեստ Գաղութի Մը Կեանքը», *Յառաջ*, 6.05.1930:
- ⁶⁸ «Քեմանչիստ Ռուբէն Չինաստանի Մէջ», *Արազ*, 10.05.1936:
- ⁶⁹ Յակոբ Մանուկեան, *Քեմանչիստ Ռուբէնի Յուշերը*, Պէյրութ, Տպ. «Հայ Տիպ Քոմփիլերաֆ-Թեքնոփիէս», 1989, էջ 96:
- ⁷⁰ «Հայուհի Մը, Խարբերիներ Հեռաւոր Մանջուրիայէն», *Հայրենիք*, 19.08.1936:
- ⁷¹ Մանուկեան, *Քեմանչիստ*, էջ 77:
- ⁷² S.A. Dalin, *Kitayskie Memuary (Չինական յուշեր)*, Մոսկուա, 1982, էջ 193:
- ⁷³ «Ծայրագոյն Արեւելքի Հոգեւոր Հովիւը», *Միտն*, 1937, թ. 5, էջ 159-160:
- ⁷⁴ «Հեռաւոր Չինաստանի Մէջ», *Արազ*, 4.10.1936:
- ⁷⁵ «Լուրեր Ծայրագոյն Արեւելքի Հայութենէն», *Միտն*, 1937, թ. 9, էջ 291:
- ⁷⁶ F. Tchakalian, "Shanghai Youth Organize Local Armenian Community", *Hairenik Weekly*, 30.12.1938:
- ⁷⁷ Ա. Աթան, «Հայ Կեանք (Ամսական Տեսութիւն)», *Հայրենիք*, 1938, Նոյեմբեր, էջ 167:
- ⁷⁸ Թէոդիկ-որդի, «Շանհայի Հայոց Ազգային Տան Հիմնարկութիւնը», *Հայաստանի Կոչնակ*, 4.03.1939, էջ 206-208: Նոյնի անգլերէն տարբերակը՝ Vahan [sic!] Theotig, "Armenian National Home is Inaugurated in Shanghai," *Armenian Mirror-Spectator*, 22.02.1939. նաեւ՝ Ա. Աթան, «Հայ Կեանք (Ամսական Տեսութիւն)», *Հայրենիք*, 1939, Ապրիլ, էջ 171:
- ⁷⁹ Թէոդիկ-որդի, «Շանհայի Հայոց...», էջ 206:
- ⁸⁰ Tchakalian, "Shanghai Youth":
- ⁸¹ Համազասպ Պսակեան, «Հանդիպումներ Եւ Պատահարներ», թ. 2, էջ 44:
- ⁸² «Խայրարի Հայութիւնը», *Հայրենիք*, 11.01.1928:
- ⁸³ «Լուրեր Ծայրագոյն Արեւելքի Հայութենէն», *Միտն*, 1937, թ. 8, էջ 260. նոյնը նաեւ՝ «Ռումանահայ Մը Ծայրագոյն Արեւելքի Մէջ», *Արազ*, 19.08.1937:
- ⁸⁴ Թէոդիկ-որդի, «Վերականգնանացեալ Խարբեր», *Հայաստանի Կոչնակ*, 6.08.1938, էջ 759:
- ⁸⁵ *Armenians in Australia and New Zealand*, compiled by Father Aramais Mirzaian, Sydney, 1966, էջ 75:
- ⁸⁶ Արշակ Ալպոյաճեան, *Պատմութիւն Եւ զոկիտյ Հայոց*, Գահիրէ, Տպ. «Նոր Աստղ», 1952, էջ 1741:

- ⁸⁷ Նոյն, էջ 74-75:
- ⁸⁸ Տէս՝ Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, Եւգենիա Արխատսկեան-Պոլիա Կինայի Ֆոնդ, թիւ 1, էջ 49:
- ⁸⁹ Թէոդիկ-որդի, «Վերականգնացեալ Խարպին», էջ 773:
- ⁹⁰ Տուեալները մեզ հաղորդել է Վալենտինա Ամիրայեանի թոռը՝ դերասան-բեմադրիչ Էդուին Համամճեանը (Մարտիկո):
- ⁹¹ «Հայկական Հնարամտութիւնը Մայրագոյն Արեւելքի Մէջ», *Հայրենիք*, 2.11.1937:
- ⁹² «Յոբելեան Բժ. Ստեփաննոս Մղտեանի» (sic), *Հայրենիք*, 2.03.1929:
- ⁹³ Համազասպ, «Մահ Բժ. Ստ. Մղտեանի», *Յառաջ*, 25.11.1933. նաեւ՝ «Խարպինի Հայրութեան Կորուստը», *Հայրենիք*, 20.12.1933:
- ⁹⁴ Kavkaz..., էջ 109:
- ⁹⁵ *Armenians in Australia and New Zealand*, էջ 99:
- ⁹⁶ Նոյն, էջ 110:
- ⁹⁷ Տէս՝ օրինակ՝ Կասպ, «Կացութիւնը Խարպինի Մէջ», *Յառաջ*, 3.06.1932. նաեւ՝ «Մանչուրիոյ Քաղաքական Կացութիւնը», նոյն, 9.06.1932:
- ⁹⁸ Նրա մասին տէս՝ Ա., «Ի Պատիւ Երգչուհի Կարինէ Պսակեանի», *Ասպարէզ*, 13.10.1964:
- ⁹⁹ Տուեալները մեզ յայտնել է Վրըջինիա Մելիքեանը (անձնական նամակ, 26.02.2007):
- ¹⁰⁰ “From Armenia to Russia, Manchur[i]a, China and San Francisco: A Conversation With Mme. Balianz of the Bali Restaurant”, *San Francisco Sunday Examiner and Chronicle*, 3.10.1976, reprinted in *The Armenian Mirror-Spectator*, 4.12. 1976; Diane Solway, Nureyev: *His Life*, New York, William Morrow and Company, Inc., 1998, էջ 368-369. նաեւ՝ Steven Winn, “Armen Balianz (1921-2007), Joyful Owner of Bali’s Restaurant, Warm-Hearted Friend of the Great,” *San Francisco Chronicles*, 4.08.2007: Արմէն Բալիի մասին տէս մեր՝ «Ռուսոլիթ Նուրէեւի Հայկական Աւանտիւրները» յօդուածում (*Հայաստանի Ջրուցակից*, 5.11.2010):
- ¹⁰¹ Նրա մասին տէս՝ Carolyne Zinko, “Tosca Cafe Owner Assaulted, Robbed. Daylight Attack in Her Restaurant”, *San Francisco Chronicle*, 30.05.2002:
- ¹⁰² «Գաղութէ Գաղութ», *Յառաջ*, 28.03.1950:
- ¹⁰³ Տէս՝ Suzanne Finstad, *Natasha: The Biography of Nathalie Wood*, New York, 2001, էջ 16:
- ¹⁰⁴ Kavkaz..., էջ 17:
- ¹⁰⁵ Երգահան Մովակ Համբարձումեանի վկայութեամբ, ինքը Երեւանում հանդիպել է Չինաստանից հայրենադարձուած մի կօշկակարի, որը հայերէն խօսել է չինարէն առողանութեամբ եւ յայտնել, որ Չինաստանն ամբողջովին պարպուել է հայութիւնից (անձնական գրոյց, 1994, Օգոստոսի 18):
- ¹⁰⁶ Դերենիկ Եպիսկոպոս, «Հայեր Մայրագոյն Արեւելքի Մէջ», *Արեւ*, 8.08.1958:
- ¹⁰⁷ Ռ. Աբրահամեան, «Չինաստան», էջ 438:
- ¹⁰⁸ Մեփրում, «Կեանքը Չինաստանում (Մասնաւոր Թղթակցութիւն «Լրաբեր»ի)», *Հրաբեր*, 4.01.1947:
- ¹⁰⁹ ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4736:
- ¹¹⁰ ՀԱԱ, ՊՖոնդ 703, ցուցակ 3, գործ 4, թիւ 27:
- ¹¹¹ ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4736:
- ¹¹² Եգնիկ Վ. Կ. Ազնակեան, «Համահայկական Համագումարը Եւ Հայ Գաղութներու Գործունէութիւնը», *Երիտասարդ Հայաստան*, 4.03.1947:
- ¹¹³ Դերենիկ Եպիսկոպոս, «Հայեր Մայրագոյն Արեւելքի Մէջ», նոյն:
- ¹¹⁴ Kavkaz..., էջ 181:
- ¹¹⁵ Մլրվա Կապուտիկեանն իր ամերիկեան ուղեգրութեան մէջ յիշել է Սան Ֆրանսիսքոյում ապրած նախկին չինահայ Մարգօ Յովհաննիսեանին՝ նշելով, որ հայերէն եւ

- ուսուներէն լեզուներին տիրապետող այդ կէնը ԱՄՆից զբօսաշրջիկները խմբեր է տարել խորհրդային Հայաստան (Սիլվա Կապուտիկեան, *Խճանկար Հոգու Եւ Քարտէզի Գոյներէ, Երեւան, «Սովետական Գրող», 1976, էջ 413):*
- ¹¹⁶ «Գաղութէ Գաղութ», *Յառաջ*, 4.01.1950. նաեւ՝ «Զինաստանի Հայերը Ապաստանել Են Յիլիական Կղզիները», *Այբբ*, 19.01.1950:
- ¹¹⁷ Դերենիկ Եպիսկոպոս, «Հայեր Ծայրագոյն Արեւելքի Մէջ», *Արեւ*, 29.07.1958:
- ¹¹⁸ Նոյն, էջ 155-157:
- ¹¹⁹ Արձանագրութեան Տոմար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, *Պուստոս Այրէսի Մասնաճիւղ*, 22 Յուլիս 1948:
- ¹²⁰ Տուեալները մեզ հաղորդել է Մաքսուդեանի դուստրը՝ լեզուաբան, Երեւանի Պետական Համալսարանի դոցենտ, Մանջուոգոյում ծնուած Լուսիկ Մաքսուդեանը 2006ի Սեպտեմբերին:
- ¹²¹ ՀԱԱ, ՊՖոնդ 362, ցուցակ 13, գործ 12, թիւ 51:
- ¹²² «Մի խումբ Հայերի Վերադարձը Զինաստանից», *Էջմիածին*, 1948, թիւ Ա-Բ, էջ 45:
- ¹²³ ՀԱԱ, ՊՖոնդ 362, ցուցակ 13, գործ 7, թիւ 17:
- ¹²⁴ Տեղեկութիւնը մեզ հաղորդել է Զինաստանում ծնուած երեւանցի Զինայրա Ստաշեւսկայան 2006 Հոկտեմբերին:
- ¹²⁵ Այս պարբերութեան մէջ հայրենադարձուած չինահայերի մասին տուեալները մեզ է տրամադրել Լուսիկ Մաքսուդեանը:
- ¹²⁶ ՀԱԱ, ՊՖոնդ 362, ցուցակ 13, գործ 44, էջ 5:
- ¹²⁷ «Ծայր-Արեւելքի Հայ Գաղութը», *Հայաստանի Կոչնակ*, 10.03.1951, էջ 236:
- ¹²⁸ «Շանկայի Հայերը», *Հայաստանի Կոչնակ*, 27.03.1954, էջ 306:
- ¹²⁹ Meltickian, "Pictorial History..":
- ¹³⁰ Դերենիկ Եպիսկոպոս, «Հայեր Ծայրագոյն Արեւելքի Մէջ», *Արեւ*, 1, 8.08.1958:
- ¹³¹ Նոյն:
- ¹³² Աբրահամեան, էջ 518:

THE ARMENIANS IN CHINA IN 1900-1950s
(Summary)

ARTSVI BAKHCHINYAN

As of the early 20th century Armenians from both Russia and the Ottoman Empire settled in various parts of China. Many went to Manchuria (Northern China) as labourers on the Chinese Eastern Railway, which was being constructed by Russia. After the Russian-Japanese War their numbers increased, particularly in Harbin, which became the center of Armenian community life, as the Armenian National Organization was founded there in 1917.

Most Armenians living in Harbin, Shanghai, Tianjin, Changchun, Mukden were shopkeepers and traders. Some owned bakeries. In 1918, the Chinese Eastern Railway Company granted the Armenian community a plot of land to build their Church, which was completed in 1923. In the 1960s, during the Chinese Cultural Revolution, the church was destroyed. The Board of the Armenian National Organization ran a school where Armenian language and literature were taught, social events took place and plays were staged. On national and religious holidays, tea parties were organized. In 1937 Rev. Fr. Asoghig Ghazarian was called in from Jerusalem. During WWII the Armenians were considered enemies of Japan and were jailed. Many died in concentration camps, while the survivors emigrated to different countries after the end of the war.